

ՌՈՒԲԵՆ ՄԻՍՈՆՅԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋՆԵԿԸ



ՀՏԴ 37.01  
ԳՄԴ 74.00  
U 504

U 504 Ռուբեն Սիմոնյան  
Անկախության առաջնեկը (ԵՊՀ ԻՄ 10-ամյակին) .-  
Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, 109 էջ:

U  $\frac{4309000000}{704(02)05}$  2005

ԳՄԴ 74.00

ISBN 5-8084-0629-3

© Ռ.Ա. Սիմոնյան, 2005

## ՉԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս գրքույկը նվիրված է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (ԵՊՀ ԻՄ) հիմնադրման 10-ամյակին, որը նորանկախ Հայաստանի՝ պետական կարգավիճակով գործող առաջնեկն է բարձրագույն կրթության համակարգում: Եվ քանի որ հաստատությունը ստեղծվել է Իջևանի տարածաշրջանային քուլեջի հիմքի վրա, ապա մեր շարադրանքում պատշաճ տեղ ենք տվել նրա հիմնադրման պատմությանը, նրա նախածեռնողներին ու կայացման երախտավորներին:

Աշխատությունը ստեղծելիս օգտվել ենք ԵՊՀ ԻՄ արխիվում պահվող ֆոնդերից, մանուլի հրապարակումներից, Իջևանի տարածաշրջանային քուլեջի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հիմնադիր կազմերի ներկայացուցիչների հաղորդումներից: Տեղեկատվության առումով անգնահատելի ավանդ են բերել ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Կարայանը, ֆիզմաթ. գիտ. թեկնածու Անուշավան Մակարյանը, պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ԻՄ տնօրեն Սամվել Առաքելյանը, վարչատնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն Գարուշ Անանյանը, կրթօջախի ուսումնական մասի վարիչ Նելլի Ստեփանյանը, ընդհանուր բաժնի վարիչ Յուրա Բեկնազարյանը, կադրերի բաժնի վարիչ Նարինե Աբազյանը, որոնց հայտնում ենք մեր երախտագիտությունը: Գրքույկի կառուցվածքի և բովանդակության համար ուղենիշ են եղել նաև Լ. Պ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը» (Երևան, 1994), «ԵՊՀ 2002-2003 ուստարվա հաշվետվություն», «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները» (Երևան, 2003) աշխատությունները:

## ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԵԿԸ

1988-ի Ղարաբաղյան շարժումը տասնամյակների պարտադրված նիրհից ազգային զարթոնքով ոտքի հանեց մեր ժողովրդին, որը կանխազգալով ԽՍՀՄ-ի փլուզումը, նպատակամետ քայլեր ձեռնարկեց Չայաստանի անկախ պետականության հաստատման, նրա անվտանգության ու անձեռնմխելիության ապահովման, տնտեսական նոր հարաբերությունների արմատավորման համար: Չայության աննախադեպ միասնության օրեր էին: Ազգն իր նոր ոգորումների ժամին մտածում ու գործում էր որպես մի սիրտ, մի հոգի: Եվ կամքի այդ դրսևորումը երևում էր ամենուր՝ ընտանիքում, լսարանում, աշխատավայրում: Եվ այդ ամենի համար իր բազմահազար խանդավառ ուսանողներով, հմուտ դասախոսներով, աշխատակիցներով առաջատար ուժ էր մայր համալսարանը:

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների նորընծա դոկտոր, պրոֆեսոր Չամլետ Կարայանի\* համար ևս կարևոր իրողություն էր Ղարաբաղյան ընդվզումը, նաև անցյալի վերհուշի առիթ: 1960-ականների կեսերին, երբ տևական նիրհից հետո զարթոնք էր ապրում ազգային ոգին, երևանի պետական համալսարանը, որպես ազգային շարժման նախածեռնող, համակված էր ժողովրդի ոտնահարված իրավունքները հարգելու, վտանգված հիշողությունները վերահաստատելու, նաև Արցախը Չայաստանին միավորելու գաղափարներով: Կաթսունականների ոգեղեն արթնացումը կամրջի դեր կատարեց ցնցումներով հարուստ քսաներորդ դարի մեկնարկի ու ավարտի միջև: Որպես ուսանողա-

\* Կարայան (Ղարայան) Չամլետ Սուրենի (ծնվ. 08.11.1945թ., գ. Աջաջուր, Իջևանի շրջան): Ֆիզիկոս, ֆիզ-մաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (1986թ.): Ավարտել է ԵՊՀ (1968թ.), 1970-88թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, 1988-ից՝ ԵՊՀ-ում: Աշխատանքները վերաբերում են կիսահաղորդիչների ֆիզիկային, էլեկտրոնիկային, էՄՍ-ներին և ինֆորմատիկային, պինդ մարմնի և արևաէներգիայի ցրման քվանտի տեսությամբ: Մշակել է էլեկտրոնախոռոչային պլազմայի ընդհանրացված տեսությունը, հայտնաբերել է պլազմադաշտային փոխազդեցության էֆեկտը, առաջարկել կիսահաղորդչային բազմավիճակ և բազմաբնույթ սարք՝ պոլիստոր:

1991թ. Իջևան քաղաքում հիմնադրել և մինչև 1996թ. ղեկավարել է քուեջ-համալսարանը՝ չորս ֆակուլտետներով, որը 1994թ. վերակազմավորվել է որպես ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ:

կան կազմակերպության ղեկավար ու ակտիվիստ՝ նա համալսարանում և երևանում ծավալվող շիկացած իրադարձությունների կենտրոնում էր: Իսկ ընդվզող անփորձ երիտասարդությանն իրենց լուսավոր գաղափարներով ու կենսափորձով ուղղորդում էին մեծավաստակ հայորդիները, որոնց անուններն արտասանվում են երախտագիտությամբ:

Ղարաբաղյան շարժման ծավալման օրերին Չամլետ Կարայանը ԵՊՀ-ում դասախոսական և գիտահետազոտական աշխատանքները համատեղում էր հանրապետության էլեկտրատեխնիկական արդյունաբերության առաջատար «Չայէլեկտրամեքենա» արտադրական միավորման գլխավոր տնօրենի գիտության գծով խորհրդականի պաշտոնի հետ: Չամլին ձեռնարկության գլխավոր տնօրեն Մարտին Չարությունյանի և արտադրության գծով տեղակալ Սեյրամ Մաթևոսյանի՝ երիտասարդ գիտնականը գտել էր նվիրյալ գաղափարակիցների, որոնց շնորհիվ սկսեցին արտադրությունում ներդրվել քիչ նյութատար, քիչ էներգատար նոր մեքենաներ ու սարքեր: Սակայն ծավալվող անկանխատեսելի իրադարձությունները նոր ուղղումներ էին մտցնում ծրագրերի մեջ: Երբ հայոց սահմանները վտանգվեցին ադրբեջանցի խուժանի կողմից, և հայրենասեր հայորդիներն ականա ձեռքները տարան զենքի, երեք ընկերների մտքից նախ ծնվեց երիտասարդ էլեկտրամեքենաշինարների աշխարհագրային «բանակ» ստեղծելու գաղափարը և շուտով այն կյանք մտավ ու փառավոր ուղի անցավ «Տիգրան Մեծ» գունդ անունով, որի ռազմերթերն ու մարտերը գլխավորեց վաղամեռիկ Արմենակ Արմենակյանը: Հզոր ձեռնարկության պետերը նաև ընդառաջեցին իրենց գիտնական ընկերոջ՝ Իջևանի շրջանի Ազատամուտ ավանում «Չայէլեկտրամեքենա»-ի մասնաճյուղ ստեղծելու մտահղացմանը: Հիմնավորումը նաև իրենց սրտով էր: Նոր ձեռնարկությունն ավելի կամրացներ Ադրբեջանի հետ հայոց սահմանի այդ հատվածը, որովհետև մշտական աշխատանք կարող էին ստանալ բազմաթիվ մարդիկ: Էլ չհապաղեցին. ստեղծվելիք մասնաճյուղի շենքերից մեկի հավաքովի կառուցվածքները սկսեցին տեղափոխել Ազատամուտ:

Սակայն հարափոփոխ կյանքը նոր ուղղումներ պարտադրեց երիտասարդ գիտնականին:

Իսկ ի՞նչ վատ կլիներ, եթե Իջևան քաղաքում ստեղծվեր որևէ բարձրագույն ուսումնական հաստատություն, ասենք ռազմատեխնիկական թեքումով կամ այլ բնույթի, որի կադրերի կարիքը զգում էր

նոր Հայաստանը: Այդ ժամանակ շատ էին խոսում բարձրագույն կրթության ապակենտրոնացման և այլընտրանքային կրթօջախներ ստեղծելու անհրաժեշտության մասին: Այդ միտքը դուր եկավ երիտասարդ ֆիզիկոսին, որը նա կիսեց Երևանի պետական համալսարանի իր գիտնական բարեկամների ու ընկերների հետ: Նրանցից շատերը նախ զարմացան, ապա ոգևորվեցին ու հավանություն տվեցին հայոց սահմանամերձ շրջանում բուհի հիմնելու մտադրությանը, խոստացան օգնել նրա կայացմանը: Համալսարանի քվանտային էլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թորոս Փափազյանը՝ իր սանին խորհուրդ տվեց պատրաստել և ներկայացնել նոր կրթօջախի ստեղծման հիմնավորումները: Հարցն անհրաժեշտ էր տեսական ոլորտից տեղափոխել գործնական դաշտ, ստանալ տեղական իշխանության համաձայնությունը և նրանց միջամտությամբ ներկայանալ հանրապետության վերին ատյաններին: Ծանր ժամանակներ էին: Օրհասական վիճակ էր ստեղծվել Արցախում, Ադրբեջանի հայաշատ շրջանները նոր էին դատարկվել, հայադրբեջանական սահմաններում իսկական մարտեր էին մղվում: Այդ, նման պայմաններում կարծես հարմար չէր նոր կրթօջախի ստեղծման հարց բարձրացնելը: Եվ մի՞թե լուսավոր ապագայի երազանքը չէր հայ ժողովրդի համար տնտեսական, նյութական ծանր պայմաններում ծնել Երևանի պետական համալսարան ու Գիտությունների ազգային ակադեմիա ունենալու գաղափարը: Նախաձեռնողն ու իր բարեկամները շարունակեցին մտորել, հաստատության կայացման համար ելքեր որոնել, ուն հարկն է՝ խնդրել, համոզել, ոգևորել...

Իջևանի շրջխորհրդի գործկոմի նախագահ Ջեմմա Անանյանը շրջկենտրոնում բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնելու առաքելությամբ Երևանից եկած հայրենակից գիտնականին ջերմ ընդունելության արժանացրեց: Պարզվեց, որ նախագահը վաղուց էր փայփայում նման միտք: Ավելին, որպես Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, մի քանի անգամ հանդես էր եկել Իջևանում որևէ բուհի մասնաճյուղ հիմնելու առաջարկով, սակայն բարձր ատյաններում հարցը համարել էին ժամանակավրեպ՝ մատնելով մոռացության: Նպատակ կար քաղաքը դարձնել տուրիզմի կենտրոն. այստեղ էին գտնվում ազգային արհեստների և կիրառական արվեստի «Իջևանատուն» թանգարանը, տուրիստական հանգրվանը, «Ջրաղաց» ռեստորանը, տարաշխարհիկ բույսերի եզակի այգին, երկրագիտական թանգարանը, եղեռնի զոհերի հուշարձանը, գինու գործա-

րանի համտեսի սրահը, «Ապիտակ լիճ» ջրամբարը: Քաղաքի մշակութային միջավայրի հարստացմանն էին միտված նաև Իջևանում անցկացվող քանդակի միջազգային սիմպոզիումները, որտեղ կերտված աշխատանքներն արդեն զարդարում էին հրապարակները, փողոցներն ու զբոսայգիները: Ծրագրի իրականացմանն սպասող շրջանի ղեկավարն անցավ գործնական քայլերի. 1991 թ. մայիսի 25-ին ՀՀ բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի (ԲԳԿ) նախագահ, պրոֆեսոր Վիլեն Հարությունյանին ուղարկվեց առաջին գրությունը.

*«Կապված Հայաստանի Հանրապետության ներկա իրավիճակի, ազգամիջյան հարաբերությունների ծայրահեղ սրման, սահմանամերձ հյուսիսարևելյան տարածաշրջանի բնակչության կործանարար արտահոսքի հետ՝ իրականացվող ազգապահպան աշխատանքների համակարգում առանձնահատուկ կարևորվում է Իջևանում գիտակրթական որևէ օջախի հիմնադրման խնդիրը միտված այդ գոտում մտավորական խավի ստեղծմանը, ժողովրդական տնտեսության համար բարձրակարգ մասնագետների պատրաստմանը: Այդ առումով մեզ մոտ կատարվել են որոշ ուսումնասիրություններ և ստեղծվել այդպիսի օջախ ունենալու անհրաժեշտ նախադրյալներ:*

*Ձեր քննությանն ենք ներկայացնում կցված հիմնավորումը՝ կազմված հյուսիսարևելյան շրջանների ղեկավարության և ԵՊՀ պրոֆեսոր Գ. Ս. Կարայանի գլխավորած կազմակերպչական հանձնախմբի կողմից:*

*խոստանում ենք ստեղծվող կրթօջախն ապահովել անհրաժեշտ տարածքներով, ֆինանսական և նյութատեխնիկական միջոցներով, մասնագիտական և օժանդակ ծառայությունների անձնակազմով:*

Իջևանի շրջխորհրդի նախագահ՝ Ջ. Անանյան»

Ինչպես ասված է գրության մեջ, կցված էր նաև կազմակերպչական հանձնախմբի հիմնավորումը, որը ելնում էր ՀՀ հյուսիսարևելյան շրջանների աշխարհագրական դիրքից և տնտեսական մակարդակից, բնական ռեսուրսներից և հոգևոր-մշակութային ավանդույթների առանձնահատկություններից.

*«Մասնավորապես Իջևանի, Տավուշի, Կարմիրի, Նոյեմբերյանի շրջանները, սահմանակից լինելով Ադրբեջանի Հան-*

րապետությանը, հանդիսանալով երկաթուղային կարևորագույն հանգույց և ունենալով ժողովրդական տնտեսության զարգացման ուրույն ձեռագիր՝ ամրացման և ազգապահպանման քաղաքականության իրականացման լուրջ խնդիրներ ունեն:

Տարածաշրջանը չնայած առկա մեծ հնարավորություններին, քաղաքական, տնտեսական, գիտակրթական, ինքնապաշտպանական և շատ այլ ոլորտների զարգացման մակարդակով զգալիորեն զիջում է հանրապետության միջին մակարդակին: Դա պայմանավորված է առաջին հերթին մտավոր պոտենցիալի դեպի երևան՝ հոսքով՝ առավելագույնս անհամասեռ դարձնելով նրա բաշխումը հանրապետության տարածքում: Տրամաբանորեն և իրականում նշված շրջանները «ժերանում են», քանի որ տեղում չի մնում երիտասարդությունը՝ չգտնելով ո՛չ համապատասխան աշխատանք և ո՛չ էլ զարգացման այժմեական միջավայր: Կապված Հայաստանի Հանրապետության ներկա վիճակի, ազգամիջյան հարաբերությունների սուր բախումների հետ՝ սահմանամերձ գոտուց բնակչության արտահոսքը դարձել է համատարած և կործանարար»:

Ուստի, հանձնախումբն այս երևույթը կանխելու քայլերի մեջ կարևորել էր Իջևանում գիտակրթական բարձրակարգ օջախի ստեղծումը, որպիսին կարող էր լինել ԳԳ հյուսիսարևելյան համալսարանը՝ պետական կարգավիճակով: Հանձնախումբը նաև գտնում էր, որ առաջիկա հնգամյակում հարկ կլինեին թողարկել մասնագետներ՝ միջազգային իրավագիտության և տնտեսական հարաբերությունների, գյուղատնտեսական էկոնոմիկայի և մեխանիզացիայի, էներգետիկայի և էլեկտրոնիկայի, ինֆորմատիկայի և միկրոտեխնոլոգիաների ասպարեզում: Փաստաթուղթն ուշադրություն էր հրավիրում.

*«Այդ ուղղությամբ առկա են կամ նախապատրաստվում են մի շարք նախադրյալներ, որոնք թույլ են տալիս կարճ ժամանակում և նվազագույն ծախսերով կազմակերպել ճկուն «լողացող» նեղ մասնագիտացումներով համալսարանական կրթություն՝ վերոհիշյալ մասնագիտությունների գծով և ժավալել համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ՝ ստեղծելով միաժամանակ բարձրակարգ ինտելեկտուալ միջավայր»:*

Ստեղծվելիք կրթօջախի կայացման համար անհրաժեշտ հարցերի մեջ կազմակերպչական հանձնախումբն առանձնացրել էր հին-

գը: Ներկայացված էր պահանջվող տարածքների ցուցակը, որը պարտավորվել էր տրամադրել Իջևանի շրջխորհրդի գործադիր կոմիտեն: Երևանի պետական համալսարանը, ճարտարագիտության ինստիտուտը, «Հայէլեկտրամեքենա», «Հրազդանմեքենա» գիտարտադրական միավորումները, ԳԳ ԳԱ ռադիոֆիզիկայի ինստիտուտը՝ որպես հովանավորներ, գրավոր խոստացել էին նոր բուհն ապահովել ժամանակակից լաբորատոր սարքավորումներով ու կա-հավորանքով: Նախատեսվում էր առաջին տարին ունենալ 100 ուսանող՝ չորս մասնագիտությունների գծով (հաջորդ տարին կավելանային ևս չորս մասնագիտություններ): Դրանց բոլոր ծախսերը՝ աշխատավարձ, կրթաթոշակ, սոցիալական վճարներ, կազմելու էին 400-450 հազար ռուբլի, որը կհայթայթվեր հյուսիսարևելյան շրջանների բյուջեներից, հովանավոր հիմնարկ-ձեռնարկություններից, բարեգործական հիմնարկներից: Նաև նախատեսվում էր ուսուցման վճարովի համակարգ ստեղծելու հնարավորություն: Կադրային հարցերի առնչությամբ հիմնավորումների հեղինակները դժվարություններ չէին տեսնում.

*«Դասախոսական կազմը կարելի էր հեշտությամբ ձևավորել, որովհետև երևանի տարբեր բուհերում, գիտահետազոտական ինստիտուտներում, այլ կրթօջախներում աշխատում էին տարբեր ոլորտների՝ հյուսիսարևելյան շրջանների ծնունդ չուրջ 100 դոկտորներ և գիտության 300 թեկնածուներ, որոնցից շատերը համաձայնություն են տվել աշխատել ստեղծվելիք համալսարանում: Նման ցանկություն ունեն նաև հանրապետության բուհերում աշխատող շատ այլ գիտնականներ ու դասախոսներ»:*

Ծրագրային հարցերի կապակցությամբ ասված էր, որ բացի իրավական և տնտեսագիտական մասնագիտություններից, որոնց գծով սովորողների ուսումնառությունը կանցկացվեր Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի ծրագրով, մյուսներն առաջին երեք տարին կուսանեն Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի ծրագրերով՝ ստանալով համընդհանուր պատրաստվածություն, իսկ հատուկ մասնագիտական դասընթացները կկազմակերպվեին մասամբ ըստ պահանջարկի:

Իջևանի շրջանի ղեկավարության և Հ. Կարայանի գլխավորած հանձնաժողովի կողմից տարված հետևողական աշխատանքի արդյունքում արդեն ամռան կեսին ԳԳ կառավարությունում և ԲԳԿ պետա-

կան կոմիտեում կար Իջևանում բուհ ստեղծելու բանավոր համաձայնություն, որի երկար սպասված որոշումը կայացվեց 1991թ. հոկտեմբերի 10-ին.

*«Ելնելով բարձրագույն կրթության զարգացման հեռանկարներից և ԳԳ հյուսիսարևելյան շրջանների կադրային պահանջներից, հաշվի առնելով ժողպատգամավորների Իջևանի շրջանային խորհրդի խնդրանքը՝ ԳԳ բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի կոլեգիան որոշում է. Իջևանում ստեղծել ռեզիդնալ բազմաճյուղ քոլեջ»:* (Տնօրեն է հաստատվում ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դպրոց, պրոֆեսոր Դամլետ Կարայանը):

Քիչ անց ճշտվում են նոր կրթօջախի կարգավիճակն ու կառուցվածքը: Այս պետական հաստատությունը պիտի ունենար երեք ֆակուլտետ՝ բնագիտական, տնտեսագիտական, հումանիտար գիտությունների, նաև՝ կիրառական արվեստի բաժանմունքով: Իսկ հոկտեմբերի 23-ին ԳԳ ԲԿԳ պետական կոմիտեի կոլեգիան կայացնում է հաստատության գործունեությունը ծավալելու որոշում.

*«1. 1991թ. նոյեմբերի 1-ից Իջևանի ռեզիդնալ քոլեջում կազմակերպել քննական շրջան հետևյալ ցանկով.*

- բնագիտական ֆակուլտետ (50 տեղ)  
մաթեմատիկա (գրավոր)  
հայոց լեզու (թելադրություն)
- տնտեսագիտական ֆակուլտետ ( 50 տեղ)  
մաթեմատիկա (գրավոր)  
հայոց լեզու (թելադրություն)
- հումանիտար գիտությունների և կիրառական  
արվեստի ֆակուլտետ (50 տեղ) \*  
օտար լեզու (գրավոր)  
հայոց լեզու (թելադրություն)

*Քննություններն անցկացնել 1991թ. բուհերի ընդունելության կարգով և ծրագրերով՝ հաշվի առնելով դիմորդների՝ արդեն հանձնած քննությունների արդյունքները: Ուսուցումը սկսել դեկտեմբերի 1-ից:*

\* Ինչպես երևում է հաստատված մասնագիտությունների ցանկից, Իջևանի քոլեջ-համալսարանը հանրապետության բուհերից երկրորդն էր լինելու, որ ունենում էր դասական կառուցվածք (բնագիտություն, տնտեսագիտություն, հումանիտար գիտություն և արվեստ):

*2. Մինչև քոլեջային համակարգի ընդհանուր կառուցակարգի մշակումը և հաստատումը Իջևանի քոլեջի գործընթացը կազմակերպել բուհական համակարգի չափանիշներով:*

*3. Ֆինանսական հաշվարկը կատարել 200 ուսանողի համար:*

Կոլեգիայի նախագահ՝ Ֆրիկ Մելիք-Աղամյան»:

Սակայն այս որոշումն ընդունելու պահին քոլեջի ռեկտորը նման էր առանց գորքի գորավարի: Ճիշտ է, նրա հետ արդեն չորս ամիս աշխատում էին շրջխորհրդի գործկոմի կողմից երաշխավորված մի քանի մասնագետներ՝ սակայն առանց հրամանի ու աշխատավարձի: ԳԳ ԲԿԳ պետական կոմիտեի կողմից հաստատված չէին հաստիքացուցակները: Հաստատությունը դեռ կնիք էլ չուներ: Ընդունելության քննությունները կայացան որոշված ժամկետից ուշ: Իսկ քոլեջի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ նոյեմբերի 1-ին: Ժողպատգամավորների Իջևանի շրջանային խորհրդի նախագահ Ջենմա Անանյանը ջերմորեն ողջունեց ու շնորհավորեց ներկաներին, երախտագիտություն հայտնեց այն գիտական ուժերին ու պաշտոնատար անձանց, ովքեր գորավիզ էին եղել կրթօջախի ստեղծմանը: Նա շրջանի բնակչության և շրջխորհրդի նախագահության անունից շնորհակալություն հայտնեց հաստատության նախաձեռնող, քոլեջի ռեկտոր Դամլետ Կարայանին, ԳԳ ԲԿԳ պետական կոմիտեի նախկին նախագահ Վիլեն Հարությունյանին, կոմիտեի գործող նախագահ Ֆրիկ Մելիք-Աղամյանին, Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ռեկտոր Թորգոմ Նալչաջյանին, «Հայէլեկտրամեքենա» գիտաարտադրական միավորման նախկին տնօրեն Մարտին Հարությունյանին, պրոֆեսորներ Գեորգի Միրզաբեկյանին, Թորոս Փափազյանին, Գառնիկ Անանյանին: Ներկաներին հայտնելով, որ տեղական իշխանության որոշմամբ ստեղծվող հաստատությանն են տրամադրվել նախկին կուսշրջկոմին և հաշվողական կենտրոնին կից մասնաշենքերը,

նա քուեջ-համալսարանի\* խորհրդանշական բանալին հանձնեց ռեկտոր Յ. Կարայանին: Ապա ընթերցվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի շնորհավորական ուղերձը.

Արգրանեյ շնորհավորում եմ  
 իջևանի շրջանի ինքնակազմաբան  
 ռեզիդենտ Գրիգորի-համալսարանի  
 Բակոյանի անդամ, հույս հայրենի-  
 լան, որ այն շուրջ կզատու-  
 ունի իր այն շրջանի, այլև հանրա-  
 պետության կարևոր կրթական  
 կենտրոնները յոթնորս:  
 Մարիա Կարգանեյով  
 Լևոն  
 Տեր-Պետրոսյան  
 23 հոկտ. 1994 թ.

Քուեջի բացման հանդիսությանը շնորհավորանքի սրտառուչ խոսքերով հանդես եկան և ՀՀ ԲԿԳ պետական կոմիտեի նախագահ Ֆրիկ Մելիք-Ադամյանը, ՀՀ Գերագույն խորհրդի գիտության ու կրթության հանձնաժողովի նախագահ, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը, հանրապետության վաստակավոր ուսուցիչ Սիրանուշ Սուքոյանը, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ռադիկ Մարտիրոսյանը, Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Թորգոմ Նալչաջյանը, Իջևանի N 1 դպրոցի շրջանավարտ, քուեջի դիմորդ Նաիրա Թանանյանը և քուեջի ռեկտոր Համլետ Կարայանի ուսուցիչը՝ հանրապետության վաստակավոր մանկավարժ Գրիգոր Ղալթախյանը:

\* Ի սկզբանե հաստատության համար օգտագործվել են և՛ «քուեջ», և՛ «քուեջ-համալսարան» անվանումները: Իսկ տնօրենը հիմնականում կոչվում էր «ռեկտոր», որովհետև ըստ կրթության կանոնադրության 7.3. կետի, այդպես էր սահմանված ղեկավարի պաշտոնի անունը:

Նոյեմբերի 6-ին «Անկախության առաջնեկին՝ կանաչ ճանապարհ» վերտառությամբ լույս տեսած շրջանային «Իջևան» թերթի հերթական համարն ամբողջովին նվիրված էր քուեջ-համալսարանի հանդիսավոր բացմանը: Առաջին էջում տեղադրված էին Լևոն Տեր-Պետրոսյանի շնորհավորանքը, Յ. Կարայանի, քուեջի գլխավոր մասնաշենքի լուսանկարները, նաև Ջեմմա Անանյանի «Բարի երթ...» հոդվածը և վաստակաշատ լրագրող Հենրի Զարգարյանի ռեպորտաժը: Շնորհավորանքի խոսքերով հանդես էին եկել Յ. Կարայանը, շնորհալի լրագրող Գառնիկ Բալասյանը, աշխատանքի վետերաններ Հրանտ Թութունջյանը, Եղիշե Հովսեփյանը, Գրիշա Սարգսյանը, շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ռազմիկ Չոբանյանը, գրող Թելման Մայիլյանը, Իջևանի N 5 դպրոցի տնօրեն Ստեփան Բաղդասարյանը, շրջանային ժողովրդական կրթության բաժնի վարիչ Քաջիկ Քամալյանը, դիմորդներ Նաիրա Դանիելյանը և Անահիտ Օհանյանը: Խոսուհի էին նյութերի վերնագրերը. «Օրինյալ է ծնունդը, համալսարան», «Մեծ ճանապարհի սկիզբը», «Թող կապո ամուր լինի», «Հպարտության զգացումով», «Դեպի հավերժություն», «Լույսի և հույսի դպրոցը», «Բարեմաղթանք հաջողության»: Որ նորեկուն իր առաջին քայլը կատարել է իսկապես ծանր պայմաններում, հասկանալի է դառնում Բաղիշ Գյուլնազարյանի՝ «Լույս չկա» մակագրությամբ լուսանկարից, ուր առարկայական հանձնաժողովը գրավոր քննության արդյունքները ստիպված ստուգում է... մոմի լույսի տակ: Իսկ հաստատության կայացման գործընթացը շարունակվում էր...

Իջևանի շրջխորհրդի գործկոմի ղեկավարության հայեցողությամբ քաղաքի տարբեր մասերում քուեջ-համալսարանի տրամադրության տակ են դրվում.

ա/ վարչական շենքը	(3 հարկ, 1100մ <sup>2</sup> մակերեսով)
բ/ ուսումնական մասնաշենք	(3 հարկ, 1400մ <sup>2</sup> մակերեսով)
գ/ ուսումնական մասնաշենք	(3 հարկ, 1100մ <sup>2</sup> մակերեսով)
դ/ ուսումնական մասնաշենք	(5 հարկ, 2454մ <sup>2</sup> մակերեսով)
ե/ գրադարանային մասնաշենք	(2 հարկ, 1020մ <sup>2</sup> մակերեսով)



Միաժամանակ քոլեջի ուսանող կարող էին դառնալ հյուսիսարևելյան տարածաշրջանի կրտսեր քոլեջներից գործուղված բարձր առաջադիմությամբ սովորողները: Քոլեջի ուսումնական համակարգը կառուցված էր լինելու ֆակուլտետներից, դրանք էլ՝ ամբիոններից: Սահմանված էր, որ քոլեջի կառավարման բարձրագույն մարմինն ընդհանուր ժողովն է կամ ներկայացուցչական համաժողովը, որը հրավիրվում է ոչ ուշ, քան տարին մեկ անգամ: Քոլեջի կառավարման ֆունկցիաները և համապատասխան պատասխանատվությունը բաշխվում են երկու խորհուրդների՝ քոլեջի ընդհանուր խորհրդի և գիտխորհրդի միջև: Գիտխորհուրդը քննարկում և լուծում է ուսումնական, գիտական գործունեության հիմնական հարցերը: Տնտեսական խորհրդին վերապահված էր քոլեջի տնտեսական գործունեությունը մշակողի և համակարգողի դեր:

Ընդունելության քննությունների ավարտին սկսվում է աշխատակազմի ձևավորումը: Տնօրենի դեկտեմբերի 1-ի №1 հրամանով կադրերի բաժնի վարիչ է նշանակվում Հայկուշ Նազինյանը, ուսումնական մասի վարիչ՝ Նելլի Ստեփանյանը, տնօրենի օգնական՝ Արկադի Դավթյանը, ուսումնական մասի դիսպետչեր՝ Նաիրա Առուշանյանը, պարետ՝ Հովհաննես Զլոյանը, ավագ գրադարանավար՝ Արուս Հովհաննիսյանը, գրադարանավար՝ Վարդիշաղ Եգանյանը: Երբ հնարավոր էր գործավարությունն առաջ տանել, դեկտեմբերի 9-ին արձակվում են ուսումնական գործին վերաբերվող անդրամիկ հրամանները: Նույն օրն էլ ռեկտոր Հ. Ս. Կարայանի ողջերթի խոսքով տեղի է ունենում կրթօջախի առաջին զանգի հանդիսավոր արարողությունը:

Օժանդակ ծառայությունների աշխատողները, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, կահավորեցին լսարանները և նախապատրաստեցին հրավիրված դասախոսներին տրամադրված հանրակացարանը, լուծեցին ջեռուցման հարցը: Սրանով հնարավոր դարձավ Ամանորի նախօրեին պարապմունքներն ապահովել բոլոր խմբերում (միայն հունվարի 11-ին ստացվեց ՀՀ կառավարության՝ Իջևանում քոլեջ ստեղծելու որոշումը, որի գործընթացը պիտի կազմակերպվեր բուհական համակարգի չափանիշներով): Տնօրենի №1 հրամանով ձևավորվում է կրթօջախի կոլեկտիվը:

## «Հրաման N1

*Իջևանի ռեզիդնալ քոլեջի ընդունելության քննությունների արդյունքներով առաջին կուրսում հրամանագրել:*

Բնագիտական ֆակուլտետում՝ ճարտարատնտեսագիտական ֆակուլտետում՝	65 ուսանող (21-34 միավոր)
Հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝	75 ուսանող (21-34 միավոր)
Դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետում՝	40 ուսանող (24-36 միավոր)
	13 ուսանող (16-28 միավոր)»:

Իսկ № 2 հրամանով ընդունելության քննություններից (մրցութից) դուրս մնացած (16-23 միավորով) դիմորդներին (բնագիտական ֆակուլտետ՝ 7 ուսանող, ճարտարատնտեսագիտական ֆակուլտետ՝ 6 ուսանող, հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ 3 ուսանող) հրամանագրվում են որպես առաջին կուրսի ուսանողներ՝ վճարովի ուսումնառության համար՝ իրենց դիմումի համաձայն: Իսկ դիմորդների ընդունելության և ուսանողների դիմումների հիման վրա ձևավորված խմբերը հետևյալ տեսքն ունեին.

## ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

1. Կիրառական մաթեմատիկա (Բ-110) 16 ուսանող (Շիֆր՝ 0102)
2. Կենսաքիմիա (Բ-111) 6 ուսանող (Շիֆր՝ 0115)
3. Կենսատեխնիկական և բժշկական սարքեր և համակարգեր (Բ-112) 15 ուսանող (Շիֆր՝ 1905)
4. Կենսատեխնոլոգիա (Բ-113) 4 ուսանող (Շիֆր՝ 2509)
5. Էլեկտրոնային տեխնիկայի նյութերի բաղադրիչների ֆիզիկա և տեխնոլոգիա (Բ-114) 6 ուսանող (Շիֆր՝ 2002)
6. Էլեկտրական կայաններ (Բ-115) 9 ուսանող (Շիֆր՝ 1001)
7. Ֆիզիկական էլեկտրոնիկա (Բ-116) 16 ուսանող (Շիֆր՝ 2001)

\* Հաստատության գործունեության մեկնարկին այսպիսի ֆակուլտետ չկար, այլ մինչև 1994թ. մայիսը առանձին բաժին էր հումանիտար գիտությունների ֆակուլտետի կազմում:

### ՃԱՐՏԱՐԱՏՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

1. Ֆինանսներ և վարկ (S-120)՝ 10 ուսանող (Շիֆր՝ 0604) 2. Հաշվապահական հաշվառում, տնտեսական գործունեության ստուգում և վերլուծություն (S-121)՝ 9 ուսանող (Շիֆր՝ 0608)
3. Միջազգային տնտեսական հարաբերություններ (S-122)՝ 15 ուսանող (Շիֆր՝ 0610)
4. Տնտեսագիտական կիրառական տեղեկատվություն (S-123)՝ 12 ուսանող (Շիֆր՝ 0609)
5. Հինարարության էկոնոմիկա և ղեկավարում (S-124)՝ 14 ուսանող (Շիֆր՝ 0708)
6. Լեռնային արդյունաբերություն և երկրաբանահետախուզական էկոնոմիկա և կառավարում (S-125)՝ 8 ուսանող (Շիֆր՝ 0714)
7. Առևտրի և հասարակական սննդի էկոնոմիկա և կառավարում (S-126)՝ 13 ուսանող (Շիֆր՝ 0709)

### ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՖԱԿՈՒԼՏԵՏ

1. Պատմություն (Հ-130) և բանասիրություն (Հ-131) (Շիֆր՝ 0702) (Շիֆր՝ 1221)՝ 23 ուսանող
2. Իրավագիտություն (Հ-132)՝ 19 ուսանող (Շիֆր՝ 0211)
3. Դեկորատիվ կիրառական արվեստ (Հ-133)՝ 14 ուսանող (Շիֆր՝ 0520)

Պարզ վիճակագրությամբ երևում է, որ իրենց ընտրած 17 մասնագիտությունների գծով նորաբաց կրթօջախի ուսանող էին դարձել 209 դիմորդներ: Հայրենիք վերադարձան Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Մոսկվայում, Պետերբուրգում, Խաբարովսկում, Ռոստովում, Ստավրոպոլում սովորող շուրջ չորս տասնյակ երիտասարդներ: 1992-ի հունվարի 1-ին քոլեջի ընդհանուր բաժնի վարիչ է նշանակվում Յուրա Բեկնազարյանը, ուսումնական մասի քարտուղար՝ Լենա Գրիգորյանը, գլխավոր հաշվապահ՝ Մելանյա Մխիթարյանը, մատակարարման բաժնի վարիչ՝ Վահան Կարապետյանը, գրադարանի վարիչ՝ Գրետա Մարությանը, ավագ գրադարանավար՝ Անահիտ Հակոբյանը, գործավար-մեքենագրուհի՝ Մարինա Անանյանը և Անահիտ Թիրաբյանը, դասախոսներ՝ Սամվել Առաքելյանը, Ալինա Ուլիխանյանը, Խաչատուր Քոչոբեյանը, Նադեժդա Տրետյակովան, Նունե Դավթյանը, Սերգեյ Օհանյանը, Գայանե Հարությունյանը, Վարուժան Ներսիսյանը, Նելլի Խուրավերդյանը, Նունե Անանյանը, Հայկ

Հեպինյանը, Գոհար Համզյանը, ասիստենտներ՝ Լարիսա Հարությունյանը, Ալբերտ Ղազարյանը, Ջավեն Ալավերդյանը, Միեր Հովսեփյանը, կադրերի բաժնի տեսուչ Աիդա Ասլանյանը և օժանդակ ծառայությունների շուրջ երկու տասնյակ մասնագետներ:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար քոլեջ-համալսարանի պրոֆեսորադասախոսական հիմնական կազմը պիտի հրավիրվեր մայրաքաղաքից: Այս գործում կարևոր դեր խաղացին Հ. Կարայանի անձնական ծանոթությունն ու մտերմությունը Երևանաբնակ անվանի գիտնականների ու փորձառու դասախոսների հետ, որոնց մի մասն իր ուսուցիչներն էին, ընկերներն ու աշակերտները: 1992 թվականի հունվար-փետրվար ամիսներին նորընծա հաստատությունում աշխատանքի են ընդունվում ՀՀ ԳԱ թղթակից անդամ Գրիգոր Ավագյանը, գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Վալերի Տեր-Անտոնյանը, Ռուլանդ Ավագյանը, Մարտին Աբրահամյանը, Իշխան Խաչատրյանը, Վիդոկ Մուսոյանը, Յուրի Մովսիսյանը, Արտաշես Պապոյանը, Ռաֆիկ Հարությունյանը, Միքայել Հովսեփյանը, Վլադիմիր Աբրահամյանը, գիտությունների տասնինը թեկնածուներ, կրթօջախի ուսումնական հարցերով պրոռեկտոր Անուշավան Մակարյանը, վարչատնտեսական հարցերով պրոռեկտոր Գարուշ Անանյանը, մի քանի տասնյակ ավագ դասախոսներ, դասախոսներ, ասիստենտներ և լաբորանտներ: 1992թ. մարտին քոլեջի դասախոսական կազմը 106 հոգի էր: Այս փուլում նախատեսված բոլոր ֆակուլտետները և ամբիոնները դեռ չէին ձևավորվել իրենց աշխատակազմերով, ուստի նրանց վերապահված գործընթացներն ապահովում էին ուսումնական հարցերով պրոռեկտոր Անուշավան Մակարյանը և ուսումնական մասի վարիչ Նելլի Ստեփանյանը: Նրանց ջանքերով կազմակերպվում են ծրագրային առարկաների դասավանդումը, ուսանողների արդյունավետ ուսումնառության գործը: Արդեն 1991-1992թթ. ուսումնական տարում Իջևանի քոլեջում դասավանդվում էին 70 առարկաներ, որոնք համապատասխանում էին համալսարանական ուսումնառության պահանջներին:

Հասկանալի է, որ գործունեության մեկնարկին կրթօջախը դեռ չուներ իր ուսումնաօժանդակ բազան, ուսումնագիտական գործընթացի կազմակերպման ստորաբաժանումները (ֆակուլտետներ, ամբիոններ): Ուստի ռեկտորատից մեծ ջանքեր պահանջվեցին ուսումնառության գործը ցանկալի հունի մեջ դնելու համար. չէ՞ որ քոլեջ-համալսարանն իր անդրամիկ քայլերը կատարում էր հանրապե-

տությունում խորացող էներգետիկ ճգնաժամի, հայ-ադրբեջանական սահմանային կռիվների պայմաններում: Հարցի կարգավորման ասպարեզում մեծ էր Իջևանի շրջխորհրդի գործկոմի նախագահ Ջեմմա Անանյանի ավանդը, որը քուլեջ-համալսարանի կայացումը համարում էր բոլոր իջևանցիների պատվի խնդիրը: Անհրաժեշտ շենքերով ապահովելուց բացի, նրա որոշմամբ 1992թ. սկզբին կիրառական արվեստի արվեստանոցներ և լաբորատորիաներ ստեղծելու համար շրջանային բյուջեի ազատ միջոցներից հատկացվեց 200.000 ռուբլի, շրջանային ժողկրթբաժնից՝ 209 սեղան, 51 աթոռ, 30 գրատախտակ: Իրենց խոստմանը հավատարիմ՝ գույքով, լաբորատոր սարքերով, արտադրության միջոցներով օգնեցին «Հայէլեկտրամեքենա» Գ/Ա միավորումը, Երևանի պետական համալսարանը, ՀՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը (նրա աշխատակից Միշա Խառատյանը ձևավորեց մեխանիկայի լաբորատորիան), Իջևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ Արմեն Ղուլարյանը, Երևանի թղթե տարայի ֆաբրիկայի տնօրեն Օրբիկ Իսախանյանը, Իջևանի քուլեջի տնօրեն Հայկազ Ոսկանյանը, Իջևանի գորգի կոմբինատի տնօրեն Բաբկեն Խուդավերդյանը, էլեկտրացանցի պետ Ալբերտ Ղալթախյանը, կապի հանգույցի պետ Սիրակ Մարտիրոսյանը:

Հաստատությունը գալիք ուսումնական տարում որակյալ դիմորդներով համալրելու նպատակով, արձագանքելով ծնողների խնդրանքին, ռեկտորի հրամանով 1992թ. փետրվարի 1-ից քուլեջին կից սկսում են գործել նախապատրաստական վճարովի դասընթացներ: Այս աշխատանքներում ընդգրկվում են հաստատության պրոֆեսորադասախոսական կազմը և տեղի փորձառու մասնագետները: Դասընթացների ֆինանսական գործունեությունը կազմակերպվում է լրիվ տնտեսաշարժի և ինքնաձեռնարկային հիմունքներով: Արդեն ձևավորվող հիմնական ֆակուլտետներից զատ ստեղծվում է նախապատրաստական դասընթացների ֆակուլտետ, որի ղեկան է նշանակվում պատմության դասախոս Սամվել Առաքելյանը: Այս կառույցը գործում է մինչև 1992թ. ամառ: Առաջին կուրսերում որակյալ ուսանողներ ունենալու մտահոգությամբ նախապատրաստական դասընթացներ կազմակերպվել են նաև 1998-1999թթ. ուսումնական տարում:

1992-1993թթ. ուսումնական տարվա մեկնարկին, երբ քուլեջ-համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը համալրվել էր նոր

մարդկանցով, կազմվում է կրթօջախի գիտահետազոտական աշխատանքով զբաղվողների ցուցակը.

1. Կարայան Համլետ - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ռեկտոր
2. Տեր-Անտոնյան Վալերի - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր բնագիտական ֆակ. ղեկան (տեղակալ՝ Սերգեյ Օհանյան)
3. Ավագյան Ռուանդ - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ֆիզիկայի ամբիոնի վարիչ
4. Աբրահամյան Մարտին - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
5. Ավագյան Գրիգոր - ՀՀ ԳԱ թղթ. անդամ, պրոֆեսոր, տնտեսագիտության ամբիոնի վարիչ
6. Խաչատրյան Իշխան - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, բարձրագույն մաթեմ. ամբիոնի վարիչ
7. Մուսոյան Վիդուկ - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
8. Մովսիսյան Յուրա - ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
9. Պապոյան Արտաշես - բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, հումանիտար ֆակ. ղեկան, լեզուների ամբիոնի վարիչ (տեղակալ՝ Նաիրա Առուշանյան)
10. Հարությունյան Ռաֆիկ - կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, կենսաբանության քիմիայի ամբիոնի վարիչ
11. Դավթյան Միսակ - կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
12. Միրզաբեկյան Գեորգի - տեխն. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
13. Առաքելյան Արամ - տեխն. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
14. Հովսեփյան Միքայել - փիլիսոփ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
15. Շահպարյան Վոան - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ
16. Զալանթարյան Վիտալի - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ
17. Մանուկյան Ալբերտ - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ
18. Օրդյան Ալբերտ - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ, ճարտարատնտեսագիտական ֆակ. ղեկան (տեղակալ՝ Սամվել Առաքելյան)
19. Հակոբյան Համլետ - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ
20. Դալալյան Սամվել - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ
21. Սիմոնյան Ալեքսան - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ
22. Յուլյան Ռոբերտ - տեխն. գիտ. թեկն., դոցենտ
23. Հայրապետյան Հրաչ - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ

- 24. Գրիգորյան Մարտին - ֆիզմաթ. գիտ. թեկն., դոցենտ
- 25. Կյուրեղյան Էդվարդ - փիլիսոփ. գիտ. թեկն., դոցենտ
- 26. Աղուզումցյան Ռուբեն - հոգեբան. գիտ. թեկն., դոցենտ, հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ
- 27. Ամիրյան Սեյրան - հոգեբան. գիտ. թեկն., դոցենտ
- 28. Իսախանյան Հմայակ - քիմ. գիտ. թեկն.
- 29. Մանասյան Վուրդյա - աշխ. գիտ. թեկն.
- 30. Խուրավերդյան Նելլի - տեխն. գիտ. թեկն.
- 31. Օհանյան Սերգեյ - կենսաբ. գիտ. թեկն.
- 32. Մեծունց Բարսիկ - բանասիր. գիտ. թեկն.
- 33. Ափինյան Աբգար - բանասիր. գիտ. թեկն.
- 34. Ջրբաշյան Աշխեն - բանասիր. գիտ. թեկն.

ՀՀ կառավարության 1992թ. հունվարի 11-ի որոշմամբ նոր կրթօջախը պիտի ունենար չորս ֆակուլտետ, որոնց կազմում մասնագիտական ամբիոններ պիտի ձևավորվեին գիտիսորհրդի հայեցողությամբ: Առաջինը ստեղծվեց հայոց լեզվի ամբիոնը (01.01.1992թ.), որի վարիչ նշանակվեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտաշես Պապոյանը, որը նույն տարվանից սկսեց համատեղել հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը: Հաշվի առնելով այս ֆակուլտետի «Կիրառական արվեստ» մասնագիտության դիլիջանաբանակ և երևանաբանակ դիմորդների մեծ քանակությունը (24 և 42)՝ քոլեջի տնօրինության որոշմամբ 1992թ. սեպտեմբերին բացվում են. Դիլիջանում՝ կիրառական արվեստի, հոգեբանության և սոցիոլոգիայի, Երևանում՝ դիզայնի բազային ամբիոնները (վարիչներ՝ Միքայել Հովսեփյան, Արսեն Մելիքյան): Դրանց հաջորդում են բնագիտական և տնտեսագիտական ֆակուլտետների ամբիոնների կազմավորումը, որոնց կայացմանը մասնակցում են հանրապետությունում ճանաչված գիտնականներ: Ֆիզկուլտուրան և սպորտը տարածելու, կրթօջախի ուսանողների ֆիզիկական պատրաստականությունը բարելավելու նպատակով տնօրինության որոշմամբ 25.09.92թ. քոլեջին կից ստեղծվում է մարզական ակումբ: Ահա այսպիսին էր հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների կայացման սկիզբը:

Տեղաբնակ դասախոսների բացակայության պատճառով շարունակվում է Երևանի ուսումնական հաստատություններից և ՀՀ ԳԱԱ ինստիտուտներից գիտնականների ներգրավումը քոլեջում ծավալ-

վող ուսումնագիտական գործընթացում: Իջևան դասախոսելու են գալիս նաև ակադեմիկոսներ Յուրի Չիլինգարյանը, Միսակ Դավթյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, հետազայում՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտքարտուղար Վարդան Թումանյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ նախկին գլխավոր դատախազ Վլադիմիր Նազարյանը, արվեստագիտության դոկտոր Ազատ Լեյլոյանը, տնտեսագիտության դոկտորներ Լավրենտի Անանյանը, Շավարշ Մարգարյանը, Մարտիրոս Պետրոսյանը, պատմական գիտությունների դոկտորներ Գուրգեն Գեղամյանը, Արամ Հայթյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր Էմիլ Քրիշչյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը, մեկուկես տասնյակ գիտությունների թեկնածուներ և արվեստագետներ: Եվ արդեն 1994 թ. սկզբին մեկ ուսանողին ընկնող պրոֆեսորների քանակով Իջևանի քոլեջը երեք անգամ գերազանցում էր հանրապետության միջին ցուցանիշը:

I ուսումնական տարվա ընդունելության ծրագրով հումանիտար ֆակուլտետում նախատեսված էր «նշակույթ և արվեստ» մասնագիտությունը, որովհետև, ինչպես նշված էր կրթօջախի ստեղծման հիմնավորումների մեջ, տարածաշրջանը հարուստ է ժողովրդական արհեստների պատմական ավանդույթներով, և երիտասարդությունը ցանկություն ուներ ուսանելու քարի, մետաղի, փայտի, կավի մշակման, գեղարվեստական հյուսքի, գորգագործության և նման մասնագիտություններ: Եվ ահա 1993թ. հունվար և մայիս ամիսներին հումանիտար ֆակուլտետի կազմում ստեղծվում են քոլեջ-համալսարանի կիրառական արվեստի և ժողովրդական արհեստների ամբիոնները (վարիչներ՝ Պողոս Կարապետյան և Գայանե Վարդանյան): Այս մասնագիտությունների ներդրման շնորհիվ հանրապետության բուհական համակարգում առաջին անգամ, Իջևանի տարածաշրջանային քոլեջում սկսեցին ուսուցանել գեղարվեստական հյուսքի այնպիսի ժանրեր, ինչպիսիք են՝ գորելենը, ասեղնագործությունը, ժանեկագործությունը, գորգագործությունը, մաքրամեն: Կիրառական արվեստի ամբիոնների աշխատանքները համակարգելու նպատակով հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ է նշանակվում նկարիչ Համլետ Ասատրյանը:

Արդեն երկրորդ ուսումնական տարվա սկզբին զգացվում էր արվեստի մասնագիտությունների տարանջատման անհրաժեշ-

տություները հունանիտար ֆակուլտետից: Երբ արդեն կային ուսումնագիտական գործընթացի կազմակերպման մեկնարկային երեք ստորաբաժանումները՝ բնագիտական, տնտեսագիտական, հունանիտար ֆակուլտետները, 1992թ. դեկտեմբերի 26-ին որոշում է կայացվում Իջևանի քոլեջի կիրառական արվեստի ֆակուլտետ ստեղծելու մասին: Սակայն հաստատության գիտխորհուրդը ժամանակավորապես կասեցնում է այդ որոշումը, որը կյանքի է կոչվում 1994-ի մայիսին, և դեկան է նշանակվում արվեստաբան Պողոս Կարապետյանը: Այդ պահին բնագիտական ֆակուլտետի դեկանն էր ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Աբրահամյանը, տնտեսագիտական ֆակուլտետինը՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարտիրոս Պետրոսյանը, հունանիտար գիտությունների ֆակուլտետինը՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Աղուզումցյանը: Իսկ ուսումնագիտական գործընթացի կազմակերպման ստորաբաժանումների ամբիոնների քանակը հասել էր քսանի:

№	Ամբիոններ	Ամբիոնների վարիչներ	Գիտական կոչում
1.	Ֆիզիկայի	Ավագյան Ռուլանդ	ֆիզմաթ.գիտ. դոկտոր
2.	ֆիզիկական էլեկտրոնիկայի և էլեկտրաֆիզիկայի	Կարայան Համլետ	ֆիզմաթ.գիտ. դոկտոր
3.	բարձրագույն մաթեմատիկայի	Դալայան Սամվել	ֆիզմաթ.գիտ. թեկն.
4.	ԷՅՄ և ծրագրավորման	Օրոյան Ալբերտ	ֆիզմաթ. գիտ. թեկն.
5.	կենսաբանության և քիմիայի	Հարությունյան Ռաֆիկ	կենսաբան. գիտ. դոկտոր
6.	հայոց լեզվի և գրականության	Տեր-Մինասյան Աշոտ	բանասիր. գիտ. թեկն.
7.	հայոց լեզվի	Դավթյան Ֆելմիրա	ավագ դասախոս
8.	օտար և ռուսաց լեզուների	Համզյան Գոհար	ավագ դասախոս
9.	հասարակագիտության	Կյուրեղյան Էդիկ	փիլիսոփ. գիտ. թեկն.

10.	պատմության	Գեղամյան Գուրգեն	պատմ. գիտ. դոկտոր
11.	իրավագիտության	Ղարիբյան Համիկ	իրավաբ. գիտ.թեկն.
12.	ֆիզիկական կուլտուրայի	Հեպինյան Հայկ	ավագ դասախոս
13.	հոգեբանության և մանկավարժության	Մկրտումյան Մելսիկ	հոգեբ. գիտ. թեկն.
14.	տնտես. տեսության և արտադրող. ուժերի տեղաբաշխման	Մանասյան Վլոդյա	աշխ. գիտ.թեկնածու
15.	Ֆինանսներ և հաշվապահական հաշվառման	Բաղանյան Լուկաշ	տնտեսագիտ. թեկն.
16.	մակրոէկոնոմիկայի և միկրոէկոնոմիկայի	Սուվարյան Յուրա	տնտեսագիտ. դոկտոր
17.	դեկորատիվ կիրառական արվեստի	Վարդանյան Գայանե	ավագ դասախոս
18.	կիրառական արվ. Դիլիջանի բազային ամբիոնի	Ասատրյան Համլետ	նկարիչ
19.	կիրառական արվ. Երևանի բազային ամբիոնի	Մելիքյան Արսեն	պրոֆեսոր
20.	կիրառական մաթեմատիկայի	Հակոբյան Համլետ	ֆիզմաթ. գիտ. թեկն.

Ամբիոնների քանակը և անվանումները ժամանակի ընթացքում փոփոխվել են՝ որևէ այլ մասնագիտության կադրերի պատրաստումը սկսելու կամ դադարեցնելու հիմնավորումով:

1991-1992թթ. ուստարին ուշ սկսելու պատճառով առաջին կիսամյակի ընթացքում կայացան մարտ-ապրիլ ամիսներին: Ըստ դրանց արդյունքների և սահմանված կարգի՝ տնօրենի հրամանով քոլեջ-համալսարանից հեռացվում են ուսումնական պարապմունքներից 36 ժամ անհարգելի բացակայած կամ ըննաշրջանին չմաս-

նակցած 6 ուսանողներ: Եվ, ընդհանրապես, ուսման որակը և ուսանողների պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով որոշվում է կիրառել ռոտացիոն համակարգ: Փոխվում է պետական պատվերով ընդունված, բայց բարձր առաջադիմություն չցուցաբերած շուրջ երկու տասնյակ ուսանողների կարգավիճակը, որոնք, հանվելով ուսումնառության պետական պատվերի համակարգից, հնարավորություն են ստանում ուսումը շարունակել վճարովի համակարգում: Այս կարգը գործում է նաև հետագայում: Ուսումնառության հիմքում դրվում է որակի ցուցանիշը: Հենց առաջին ուսումնական տարում կրթօջախի ղեկավարությունը լրջորեն զբաղվեց սահմանաձեռն շրջանում գտնվող զոհված և վիրավոր ազատամարտիկների, նյութապես անապահով ընտանիքների սովորող երեխաների խնդրով: Ժամանակը հրամայաբար պահանջում էր տեր կանգնել նրանց հոգսերին և ընդառաջել: Այդ նպատակով ստեղծվեց հանձնաժողով՝ կրթօջախի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Անուշավան Մակարյանի գլխավորությամբ: Տեղական իրավասու մարմինների և հանձնաժողովի մանրակրկիտ ուսումնասիրությունների միջոցով նման ընտանիքներից սովորողներին տրվեցին արտոնություններ՝ վճարովի համակարգից տեղափոխվել անվճար ուսումնական կարգավիճակի՝ ստանալով կրթաթոշակ: Խնդրի լուծմանը նաև նպաստեց ՀՀ ԲԿԳ նախարարության 1993-ի օգոստոսի 1-ի որոշումը, որով սահմանված էր, որ պետական պատվերով հատկացված թափուր տեղեր առաջանալու դեպքում կարելի էր նույն մասնագիտության գծով և նույն կուրսում վճարովի հիմունքներով սովորողներից ոմանց տեղափոխել անվճար համակարգ՝ հիմք ընդունելով սովորողների առաջադիմության արդյունքները, նրանց ընտանիքների սոցիալական վիճակը և նյութական ապահովվածությունը: Գործող հանձնաժողովի ներկայացնելով՝ 1993-ի հոկտեմբերին վճարովի համակարգից անվճար կարգավիճակի են անցնում. բնագիտական ֆակուլտետում՝ 4, ճարտարատնտեսագիտական ֆակուլտետում՝ 5, հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ 13 ուսանողներ: Միաժամանակ նրանց համար սահմանվում է կրթաթոշակ:

Ցանկացած գործի սկիզբը լինում է դժվար, որովհետև կայացմանը խանգարում են փորձի պակասը, բազմաթիվ անհայտներն ու խոչընդոտները: Իջևանի նոր կրթօջախի կայացման սկիզբը համընկավ Խորհրդային Միության փլուզմանը, Հայաստանի շրջափակմանը, օր օրի խորացող տնտեսական ճգնաժամին: Նրանք, ովքեր կա-

րող էին սովորական պայմաններում առատաձեռն օգնել քոլեջին, իրենք էին հայտնվել դժվարին կացության մեջ: Փակվում էին մեծ ու փոքր ձեռնարկություններ, ուստի երբեմն թվում էր, թե կրթօջախի ղեկավարությունը ծառացող խոչընդոտները անհաղթահարելի են: Հաստատության կայացման հրամայականը ռեկտոր Հ. Ս. Կարայանին ստիպում է հանրապետության այլ վայրերում և Ռուսաստանում բնակվող հայրենակիցներին դիմել նամակով.

*«Հասկանում եմ, շուկայական հարաբերությունների ծավալման ու խորացման պայմաններում խնդրելը հարգի չէ, իսկ կրթօջախի հոգսերի թելադրանքով իմ գրությունը ծանրաբեռնեցի խնդրանքների շարքով: Ինձ փրկում է շրջանի ներկային ու ապագային միտված մեր կրթօջախի նկատմամբ Ձեր անկեղծ ու բարեկամական սրտացավությունը»:*

Եվ նա, օգնության խնդրանքից բացի, հայրենակիցներին դիմում է գիտատեխնիկական համագործակցության կոչով. քոլեջը նոր գործընկերոջը կարող էր ծառայել իր գիտական ներուժով:

Մասնաշենքերում այլևս չէր գործում ջեռուցման կենտրոնացված համակարգը. մնում էր լսարաններում և հանրակացարանում ջերմություն ապահովել փայտով կամ հեղուկ վառելիքով, հայթաթել վառարաններ, էլեկտրացանցի հովհարային անջատումների պայմաններում էլեկտրական լուսավորություն ապահովել գոնե քննությունների ժամերին: Հենց վառելիքաէներգետիկ ճգնաժամի պատճառով քոլեջը հարկադրված արձակուրդում էր 1993թ. հունվար, փետրվար, մարտ ամիսներին: Երևանից դասախոսներին տեղափոխող ավտոբուսը հին էր և վաղուց նորոգման կարիք ուներ: Ուստի հաճախ կարելի էր ծյունառատ, սառցակալած ճանապարհներին տեսնել տեղապտույտ տվող հին ավտոբուսը համերաշխորեն հրող...անվանի գիտնականներին, որոնք, անտեսելով դժվարությունները, շարունակում էին սահմանված ժամանակացույցով գալ Իջևան, որպեսզի անպայման կայանա անկախության առաջնեկ կրթօջախը: Նրանցից մի քանիսն էլ այդ նպատակին, ինչպես ասվեց, ծառայեցին անվարձա-հատույց: Երևանաբնակ դասախոսների անխափան տեղափոխման գործում արժանին պիտի մատուցել տնօրենին և տեղակալ Գարուշ Անանյանին, որոնք հեղուկ վառելիք չլինելու պայմաններում ապահովեցին Երևան-Իջևան, Իջևան-Երևան բոլոր ուղերթերը: Պարապուրդներ չեղան:

Հաստատության հոգսերը թեթևացնելու նպատակով Հ. Կարա-  
յանը քանիցս դիմում է «Հայամտառ» արտադրական միավորմանը՝  
քոլեջ-համալսարանի ուսումնասօժանդակ տնտեսություն ստեղծելու  
համար հատկացնել 15 հեկտար հողատարածք, սակայն մերժվում է:  
Իջևանի շրջխորհրդի գործադիր կոմիտեն կրթօջախին թույլ է տալիս  
իր ֆոնդերի հաշվին 1992թ. գնել 4205 լիտր բենզին: Հաջորդ տա-  
րում ամսական 1500 լիտր բենզին է հատկացնում օպերատիվ կա-  
ռավարման հանրապետական շտաբը: Մթերքների բացակայության  
պատճառով պարզապես չէր կազմակերպվում քոլեջի աշխատակազ-  
մի, ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի սնունդը:

*«Կրթօջախում դասավանդում են բարձրագույն որակավոր-  
ում ունեցող դասախոսներ (40 հոգի), որոնք, հանգամանքնե-  
րի բերումով, հրավիրվում են մայրաքաղաքից: Նրանք կրթօ-  
ջախի անփոխարինելի հարստությունն ու հպարտությունն են:  
Սիս այդ մարդկանց օրական մեկ անգամ տաք սննդով ապա-  
հովելու դժվարին, բայց հրամայական պարտականությունն է,  
որ կրթօջախը ի սկզբանե վերցրել է իր վրա»:*

Եվ նամակագիրը խնդրում է համատեղ ջանքերով լուծել հարցը:  
Շրջխորհրդի գործկոմի նախագահ Ջ. Անանյանի միջամտու-  
թյամբ այդ դժվարին օրերին լուծվում է մթերքների նվազագույն մա-  
տակարարման հարցը, քոլեջի մասնաշենքերից մեկում կազմակերպ-  
վում է ճաշարան:

1991թ. վերջից պաշտոնապես գոյություն չունեղ խորհրդային  
Միությունը, սակայն դեռևս շրջանառության մեջ էր խորհրդային  
ռուբլին, որը արժեզրկվում էր օրեցօր՝ ավելի վատացնելով կենսա-  
պայմանները: Քոլեջի տնօրինությունը ձգտում է դույզն-ինչ շտկել  
դրությունը: 1993թ. ապրիլի 22-ին 1,5 անգամ ինդեքսավորում է պրո-  
ֆեսորադասախոսական կազմի աշխատավարձը: Ըստ զբաղեցրած  
պաշտոնի՝ լրիվ դրույքի համար սահմանվում են հետևյալ աշխա-  
տավարձերը.

1. պրոֆեսոր	- 12.800ռ.
2. դոցենտ	- 9.900ռ.
3. դեկան	- 3.000ռ.
4. փոխտնօրեն	- 2.100ռ.
5. ամբիոնի վարիչ	- 1.800ռ.
6. ավագ դասախոս (գիտ.թեկն.)	- 9.900ռ.
7. ավագ դասախոս	- 6.200ռ.

8. դասախոս (գիտ. թեկն.)	- 5.900ռ.
9. դասախոս (ասիստենտ)	- 5.400ռ.
10. լաբորատորիայի վարիչ (գիտ. թեկն.)	- 5.700ռ.
11. լաբորատորիայի վարիչ (ասիստենտ)	- 4.900ռ.
12. ավագ լաբորանտ	- 4.200ռ.
13. լաբորանտ	- 3.900ռ.
14. տեխնիկ	- 3.700ռ.

ՀՀ ԲԿԳ նախարարության հաստատած նոր ուսումնական տար-  
վա ծրագրով 1992 թ. հուլիս-օգոստոս ամիսներին տեղի ունեցած ըն-  
դունելության քննությունների արդյունքներով առաջին կուրսի ուսա-  
նող է հրամանագրվում 199 դիմորդ՝ անվճար և 71՝ դիմորդ՝ վճարովի  
ուսուցման համակարգում: Ներդրվել էին նոր մասնագիտություններ՝  
բժշկական կիբեռնետիկա, ռազմական և ֆիզիկական ճարտարագի-  
տություն, ազգագրություն, ազգային բանահյուսություն: Իր սուղ  
հնարավորությունների պայմաններում անգամ քոլեջը սովորողներին  
կրթաթոշակ է նշանակում՝ 450 ռուբլու չափով: Միաժամանակ դրամա-  
կան խրախուսանք է սահմանվում «գերազանց» և «հարվածային» ա-  
ռաջադիմությամբ սովորողների համար, որից միայն 1992-1993թթ.  
ուստարվա առաջին կիսամյակում օգտվում է 55 ուսանող: Նաև կի-  
րարվում է երկկողմանի ծնողազուրկ, ընտանիքում 1-ին և 2-րդ խմբե-  
րի հաշմանդամ ունեցողների, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհ-  
ված զինվորների կամ ազատամարտիկների սովորող երեխայի ու-  
սման վարձերը 50-100 տոկոսով զեղչելու կարգը:

Իսկ 1993-1994թթ. ուստարվա ընդունելության քննությունները  
որակապես տարբերվեցին նախորդից, որովհետև առաջին կուրսե-  
րում հրամանագրված դիմորդների մեծ մասն ուսանող էր դարձել  
բարձր միավորներով: Օրինակ, «միջազգային հարաբերություններ»,  
«ֆինանսներ և վարկ», «իրավագիտություն», «դեկորատիվ կիրառական  
արվեստ» մասնագիտություններ ընտրածներն ուսման անվճար համա-  
կարգում ընդունվել էին համապատասխանաբար 41, 42, 49 և 60 միա-  
վորներով: Նախարարության սահմանած կարգով վճարովի համակար-  
գով ուսանող են դառնում ևս 79 դիմորդներ: Միաժամանակ Իջևանի գո-  
րգի կոմբինատի տնօրեն Բաբկեն Խուրավերոյանի հոգածությամբ  
մրցույթից դուրս մնացած 17 դիմորդներից առաջին անգամ ձևավոր-

վում է «գորգագործություն և գորելեն» մասնագիտության գծով պատվիրված խումբ: 1994թ. ընդունելության քննությունների արդյունքով առաջին կուրսերի ուսանողներ են դառնում 132 դիմորդներ: Հունամիտար գիտությունների ֆակուլտետում ներդրվում է «մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությունը: Որպես ազատ ունկնդիր՝ սովորելու հնարավորություն են ստանում 14 դիմորդներ:

Քոլեջի կանոնադրությանը համապատասխան՝ գործում էր ուսումնառության երկաստիճան համակարգ: Այսինքն, ուսուցման դասընթացը «լավ» և «գերազանց» գնահատականներ ստացած ուսանողները 3-րդ կուրսից կարող էին շարունակել մասնագիտանալ բուհական ծրագրերով և ստանալ բակալավրի դիպլոմ, առաջավորները՝ նաև բակալավրի գիտական աստիճան: Ցածր առաջադիմությամբ սովորող ուսանողները 3-րդ կուրսում պիտի ձեռք բերեին ամփոփիչ մասնագիտական կրթություն և, ավարտելով եռամյա դասընթացները, ստանային դիպլոմ՝ կրտսեր ինժեների որակավորմամբ: Իսկ բարձր և ցածր առաջադիմությամբ ուսանողների ընտրությունը պիտի կատարվեր ուսումնառության երկրորդ տարվա վերջին արդյունքների հիման վրա: Համաձայն «Քոլեջների պարտադիր երկամյա ծրագիրը կատարած լավագույն ուսանողների կրթությունը շարունակելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատություններ և վերջիններից քոլեջ տեղափոխելու կարգ»-ի՝ առաջին անգամ կրթօջախում նման ընտրություն կատարվել է 1993թ. հոկտեմբերին: Գիտխորհուրդն արդարության ուղենիչ էր համարում գնահատականների՝ իր կողմից հաստատված նվազագույն շեմային միավորները: Դրան համապատասխան՝ քոլեջի երկամյա ծրագիրը հաջողությամբ կատարած 85 ուսանողի հանձնաժողովը տեղափոխեց բարձրագույն կրթության համակարգ: Իսկ քոլեջի երկամյա ծրագիրը կատարած 114 ուսանողների հանձնաժողովը թույլատրեց քոլեջային ուսումնառությունը ևս մեկ տարի շարունակել և ավարտել: Նման ընտրություն իրականացվում է նաև 1994-ի հոկտեմբերին: Ավելորդ չէ նշել, որ այս անգամ գիտխորհուրդը սահմանել էր. բնագիտական ֆակուլտետում՝ 3,25, տնտեսագիտական ֆակուլտետում՝ 3,5, հումանիտար ֆակուլտետում՝ 3,75 շեմային միավորներ: Դրանցով հանձնաժողովը պարզեց, որ բարձրագույն ուսումնառության բաժին կարող է տեղափոխվել բարձր առաջադիմություն ցուցաբերած 75 ուսանող:

Միաժամանակ բարձրագույն ուսումնառության բաժնի 2-րդ կուրսի առաջին կիսամյակում անբավարար առաջադիմություն ցու-

ցաբերած և, ըստ կանոնակարգի, հեռացման ենթակա ուսանողներին թույլատրվեց տեղափոխվել քոլեջային ուսուցման բաժին: Իսկ բարձրագույն ուսումնառության բաժնի 2-րդ կուրսի երկրորդ կիսամյակում անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին թույլատրվեց հանձնել քոլեջային ավարտական պետական քննությունները և ավարտել ուսումնառությունը: Եվ կատարվեց հակառակ քայլը. քոլեջային ուսումը գերազանցությամբ ավարտած շրջանավարտներին թույլատրվեց ուսումը շարունակել բարձրագույն ուսումնառության բաժնում՝ տարբերությունները հանձնելով: Իսկ ահա քոլեջային ուսումնառության մեջ ընդգրկվածներն առաջին անգամ պետական քննություն հանձնեցին 1994թ. դեկտեմբերին: Քննություններն ուշացան, որովհետև կրթօջախում ուսումնառությունը սկսվել էր երեք ամիս ուշացումով՝ 1991թ. դեկտեմբերին: Անհրաժեշտ էր կատարել ուսումնառության ողջ ծրագիրը:

1993-1994 ուստարում Իջևանի քոլեջ-համալսարանի ղեկավարության, ուսանողության և ծնողների շրջանում մեծ հուզումների ու լարվածություն առիթ դարձավ տղաներին զինվորական ծառայության տարկետման իրավունքից զրկելու փաստը, որից կրթօջախի ուսանողներն օգտվել էին ուսումնառության նախորդ երկու տարիներին: Ուստի 1994թ. ապրիլի 6-ին ռեկտոր Գ. Ս. Կարայանը ՀՀ արդարադատության նախարարությանը հասցեագրած գրությամբ հայտնում է, որ Իջևան քաղաքում բուհական համակարգի չափանիշներով ռեզիդնալ բազմաճյուղ քոլեջի ուսանողությունը, ըստ հաստատված կանոնադրության, պիտի օգտվի ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների իրավունքներից և պարտականություններից, բայց չի օգտվում: Բանն այն էր, որ գործող օրենքին համապատասխան, 1992-ի սեպտեմբերի 24-ի N 486 որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության ուսանողների ժամկետային զինվորական ծառայության զորակոչի տարկետման իրավունքից օգտվող բուհերի և քոլեջների ցանկում եղել էր Իջևանի քոլեջը: Այդ մասին լավ են իմացել և՛ դիմորդները, և՛ ծնողները, և՛ հանրությունը, սակայն մեկ տարի անց, անհայտ պատճառներով, կրթօջախը հանվել էր ցանկից: Ուստի ռեկտորը ՀՀ արդարադատության նախարարին խնդրում էր վերանայել վրիպումը և վերականգնել Իջևանի քոլեջ-համալսարանի ուսանողության տարկետման իրավունքը: Եվ դա շուտով տեղի է ունենում, բայց արդեն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ստեղծելու համատեքստում՝ 1996-ի հունվարին:

Երկրորդ ուսումնական տարում հաստատության կանոնադրության պահանջներին համապատասխան քոլեջ-համալսարանում ծավալվում են գիտահետազոտական աշխատանքներ: Դրանց նպատակն էր՝ նպաստել ուսուցման որակի աճին, խթանել գիտահետազոտական հակում դրսևորող ուսանողների եռանդը, պատրաստել գիտական նոր կադրեր: ԴՅ ԲԿԳ նախարարության և «Հայէլեկտրամեքենա» Գ/Ա միավորման հետ կնքած «92-1265» տնտեսական պայմանագրի «Երկշերտ հետերակառուցվածքային արևային մարտկոցների սնողելավորում և օպտիմիզացիա» թեմայով աշխատանքների կատարմանը ձեռնամուխ եղան թեմայի ղեկավար, ֆիզմաթ. գիտ. դոկտոր Համլետ Կարայանը, ֆիզմաթ. գիտ. թեկնածուներ Ալբերտ Օրդյանը, Ալբերտ Մանուկյանը, ավագ գիտաշխատող Անուշավան Մակարյանը, 7 ինժեներներ, լաբորանտներ և 4 ուսանողներ: Առաջարկված թեմայով խնդիր էր դրված մեծացնել լուսային էներգիայի կլանումը փոխակերպիչի մակերևույթի վրա, ընդարձակել կլանման սպեկտրը և նվազագույնի հասցնել ջերմային կորուստները: Թեման իրականացվեց հաջողությամբ: Այդ ուղղությամբ հետագայում շարունակված հետազոտությունները հնարավորություն տվեցին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին հանդես գալու միկրոէլեկտրոնիկայի մշտական գործող գիտաժողով (երկու տարին մեկ անգամ) իրավիրելու նախաձեռնությամբ: Այդպիսիք արդեն տեղի են ունեցել 1997, 1999, 2001 և 2003 թվականներին:

1993թ. ամռանը նախարարությունը քոլեջին առաջարկում է նոր գիտական թեմա, որը Հայաստանի հյուսիսարևելյան սահմանակալ շրջանների հասարակական կյանքի երևույթներն ուսումնասիրողների համար մեծ հետաքրքրություն էր ներկայացնում. «ԴՅ Տավուշի պատմաազգագրական տարածքի ժամանակակից էթնոսոցիալական գործընթացները». գիտական թեմայի ղեկավար հաստատվեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու Էդիկ Կյուրեղյանը, որի հետ աշխատում էին 4 գիտաշխատող և 3 ուսանող: Հաստատությունում հետագայում գիտահետազոտական աշխատանքներն ընթացան կիսահաղորդչային միկրոէլեկտրոնիկայի, փոքր բիզնեսի զարգացման, էլեկտրոնային տեղեկատվության, պատմության, մանկավարժության և հոգեբանության հարցերի ուսումնասիրության ուղղությամբ: Այդ գործընթացում բազմաթիվ ուսանողներ ամրապնդեցին իրենց գիտելիքները, ձեռք բերեցին գիտահետազոտական աշխատանքի հմտություններ, դարձան ասպիրանտներ, իսկ մի քանիսը պաշտպանեցին թեկնածուական թեզ:

Երբ մայր համալսարանի ղեկավարության հետ կար բանավոր համաձայնություն, Հ.Կարայանը 1994-ի ապրիլի 14-ին գրությամբ դիմում է ՀՀ ԲԿԳ նախարար, կրթօջախի ապագայով մտահոգ Վարդգես Գնունուն:

*«Ելնելով հանրապետությունում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակից, որն իր ազդեցությունն է թողնում կրթօջախի գործունեության վրա, Իջևանի տարածաշրջանային քոլեջի կոլեկտիվը խնդրում է ԲԿԳ նախարարության կողմից համալսարանի Իջևանի մասնաճյուղի ձևավորման նպատակահարմարության հարցը»:*

Միաժամանակ հանրապետության հյուսիսարևելյան տարածաշրջանը բարձրագույն կրթությամբ մասնագետներով ապահովելու և երիտասարդության արտահոսքը կանխելու մտահոգությամբ, նույն առաջարկություններով հանդես են գալիս Երևանի պետական համալսարանի ռեկտորատը և Իջևանի շրջխորհրդի գործադիր կոմիտեն: Դրանց հիման վրա ՀՀ ԲԿԳ նախարարության կողմից 1994-ի ապրիլի 29-ին որոշում է.

*«1. Համարել նպատակահարմար Իջևանի տարածաշրջանային քոլեջը վերակազմավորել որպես Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ»:*

*2. Հանձնարարել Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Մարտիրոսյանին և Իջևանի տարածաշրջանային քոլեջի տնօրեն Հ.Կարայանին, երկամսյա ժամկետում ներկայացնել մասնաճյուղի ստեղծման կապակցությամբ պահանջվող փաստաթղթերի փաթեթը»:*

Դեռ չիմանալով հաստատությունում իրագործվելիք փոփոխությունների մասին՝ մարտի 1-ին քոլեջի ուսումնական հարցերով տնօրենի տեղակալ Անուշավան Մակարյանը ՀՀ ԲԿԳ նախարարությանը խնդրում է թույլ տալ 1994թ. ընդունելության քննությունները կազմակերպել «բժշկական և կենսատեխնիկական սարքավորումներ և համակարգեր», «ֆիզիկական էլեկտրոնիկա», «կիրառական մաթեմատիկա», «ընդհանուր տնտեսագիտություն», «տնտեսագիտական ինֆորմատիկա», «բանասիրություն և բանահյուսություն», «իրավագիտություն», «կիրառական սոցիոլոգիա և հոգեբանություն», «մշակույթ և արվեստ», մասնագիտությունների գծով և հատկացնել 180 տեղ: Նախարարությունը փոփոխության է ենթարկում մասնագի-

տությունների ցանկը, որը կերևա քոլեջը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ վերակազմելու՝ ՀՀ կառավարության որոշման հավելվածից, իսկ ակնկալվող տեղերի քանակը կրճատում է 30-ով: Օգոստոսին տեղի ունեցած քննությունների արդյունքով և ընդունելության հանձնաժողովի որոշմամբ՝ սեպտեմբերի 1-ին առաջին կուրսի ուսանող են հրամանագրվում. պետական պատվերով ուսումնառության համակարգում՝ 116, վճարովի համակարգում՝ 17, ազատ ունկնդրի կարգավիճակով՝ 14 դիմորդներ: Նոր ուսումնական տարվա մեկնարկի հետ որոշ ուսանողների թույլատրվում է որևէ փորձառու գիտնականի ղեկավարությամբ անցնել անհատական ծրագրով ուսուցման: Հաստատության նոր կարգավիճակը՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ անվամբ, պետականորեն վավերացվում է ՀՀ կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 19-ի N 440 որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության  
կառավարություն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
19 սեպտեմբերի 1994թ. N 440  
Քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻԶԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՔՈԼԵՋԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ  
ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության առաջարկությունը և Իջևանի տարածաշրջանային քոլեջը վերակազմավորել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի:

2. Իջևանի տարածաշրջանային քոլեջին 1994 / 95 ուսումնական տարվա ընդունելության պետական պատվերով նախատեսված 150 տեղի փոխարեն Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին հատկացնել 125 տեղ՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1992 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության Իջևանի տարածաշրջանային քոլեջ ստեղծելու մասին» N 23 որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և քոլեջների 1994 / 95 ուսումնական տարվա ընդունելության պետական պատվերի հաստատման մասին» N 109 որոշման N 2 հավելվածի 3-րդ բաժինը:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ՝ Գ. ԲԱԳՐԱՏՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
կառավարության գործերի  
կառավարիչ՝ Ս. ՄԱՆԱՍՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ  
ՀՀ կառավարության 1994թ.

սեպտեմբերի 19-ի N 440 որոշման

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՆԱՍՏՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 1994 / 95  
Ա ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ուրջան հորը	Մասնագիտության անվանումը	1994թ. ընդունելություն (տեղ)
	ֆիզիկա	20
	մաթեմատիկա	15
10	ընդհանուր տնտեսագիտություն	30
	հայոց լեզու և գրականություն	15
	պատմություն	15
	մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա	15
	դեկորատիվ-կիրառական արվեստ	15
Ընդամենը		125

Հայաստանի Հանրապետության  
կառավարության գործերի  
կառավարիչ Ս.ՄԱՍՍԱՐՅԱՆ

տեմբերին, նախորդ տարիների ընդունելության պայսպատասխան, տեղի է ունենում քոլեջային երկամյա յրած ուսանողների հերթական ընտրությունը: Հանձնալայաջամբ բարձր առաջադիմություն ցուցաբերած շ հրամանագրվում են ուսումը բարձրագույն ուսումնակարգում շարունակելու համար, իսկ 87-ը մնում են ակելու քոլեջային ուսումնառության համակարգում: ւն տեղի են ունենում ավարտական առաջին քննութ-

յունները, և հաստատությունը տալիս է իր անդրանիկ շրջանավարտները: Դեկտեմբերի 27-ին պետական հանձնաժողովը 1991 թվականին քոլեջ ընդունվածներից 12 շրջանավարտի շնորհում է պատմության, հայոց լեզվի և գրականության ուսուցչի, 13-ին՝ ֆիզիկոս-տեխնոլոգի, 4-ին՝ իրավաբանի, 9-ին՝ ֆինանսիստի և 6-ին՝ հաշվապահի որակավորում: Նրանց տրվում է քոլեջի շրջանավարտի դիպլոմ: Կարգավիճակի փոփոխության կապակցությամբ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում (ԵՊՀ ԻՄ) անց է կացվում ուսումնաօժանդակ կազմի ատեստացիա և գույքագրում: Աշխատանքներ են ծավալվում առարկայական ծրագրերը մայր բուհի ծրագրերին համապատասխանեցնելու և մասնաճյուղի կանոնադրությունը մշակելու ուղղությամբ:

Երբ ՀՀ կառավարության 1994թ. սեպտեմբերի 19-ի N 440 որոշմամբ սկսվում է Իջևանի տարածաշրջանային քոլեջի ԵՊՀ մասնաճյուղ վերակազմավորելու գործընթացը, կրթօջախում կատարվում են կառուցվածքային նոր փոփոխություններ: Ճիշտ է, ֆակուլտետների քանակը մնաց նույնը և նույնների 11-ին բնագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնում պրոֆեսոր Մարտին Աբրահամյանին փոխարինեց պրոֆեսոր Ռուլանդ Ավագյանը, սակայն որոշակի փոփոխություններ կրեցին ամբիոնները, դրանց վարիչների և աշխատակիցների կազմը, որը 1995թ. հունվարին 1-ին տնօրենի հրամանով վերահաստատվել էր մասնաճյուղի ղեկավար և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ստորև բերվող հաստիքային ցուցակով.

N	Ազգանուն, անուն	պաշտոն և գիտական կոչում	մշանակվելու տարեթիվը	մանկավարժական ստաժը
1.	Կարայան Հանլետ	տնօրեն, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	10.10.1991	24
2.	Մակարյան Անուշավան	փոխտնօրեն	01.03.1992	12
3.	Ավագյան Ռուլանդ	բնագիտական ֆակ. դեկան, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	18.11.1994	25
4.	Առաքելյան Սամվել	տնտեսագիտության ֆակ. դեկան, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.01.1992	5

5.	Աղուզումցյան Ռուբեն	հունանիտար ֆակ. դեկան, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ	07.06.1994	21
6.	Կարապետյան Պողոս	դեկորատիվ կիրառ. արվեստի ֆակ. դեկան	07.06.1994	14
7.	Թումանյան Վարդան	գիտական քարտուղար, փիլիսոփ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	07.06.1994	34

ԱՄԲԻՈՆՆԵՐ

1.	<i>ֆիզիկայի</i>			
	Ավագյան Ռուլանդ	ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	01.01.1993	26
	Աբրահամյան Մարտին	ֆիզմաթ. գիտ., դոկտոր, պրոֆեսոր	01.03.1992	23
	Տեր-Անտոնյան Վալերի	ֆիզմաթ. գիտ., դոկտոր, պրոֆեսոր	01.01.1993	26
	Կիրակոսյան Ալբերտ	ֆիզմաթ. գիտ., դոկտոր, պրոֆեսոր		
	Թրումի Կարապետ	ֆիզմաթ. գիտ., դոկտոր, պրոֆեսոր		
2.	<i>Ֆիզիկական էլեկտրոնիկայի և էլեկտրաֆիզիկայի</i>			
	Կարայան Համլետ	ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	01.09.1994	24
	Մանուկյան Ալբերտ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ	18.11.1992	10
	Քալանթարյան Վիտալի	ֆիզմաթ. գիտ., թեկնածու, դոցենտ	01.03.1992	12
	Սելբումյան Սերգեյ	տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ	04.03.1993	14

	Յուլյան Ռոբերտ	տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ	01.09.1992	9
3.	<i>Բարձրագույն մաթեմատիկայի</i>			
	Ղալայան Սամվել	ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.09.1994	22
	Հայրապետյան Հրաչիկ	ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	23.03.1994թ	23
	Խաչատրյան Իշխան	ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	01.01.1992	23
	Ղալումյան Աշոտ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ	23.03.1994	24
4.	<i>ԷՊՄ և ծրագրավորման</i>			
	Օրդյան Ալբերտ	ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.09.1992	22
	Շաքարյան Կիմ	ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	23.12.1994	20
	Առաքելյան Հմայակ	ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	23.02.1994	21
5.	<i>Կիրառական մաթեմատիկայի</i>			
	Հակոբյան Համլետ	ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.03.1993	21
	Սիմոնյան Ալեքսան	ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.09.1992	19
	Քոչոբեյան Խաչատուր	ավագ դասախոս	01.01.1992	3
6.	<i>Կենսաբանության և քիմիայի</i>			
	Հարությունյան Ռաֆիկ	ամբիոնի վարիչ, կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	01.01.1992	36
	Քրիշչյան Էմիլ	կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	01.01.1994	37
	Խախանյան Հմայակ	քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.04.1992	27
	Օհանյան Սերգեյ	կենսաբան. գիտ. թեկնածու	01.01.1992	2

7.	<b>Հայոց լեզվի և գրականության</b>			
	Տեր-Սինասյան Աշոտ	ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկնածու, դոցենտ	01.01.1993	19
	Գասպարյան Դավիթ	բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	01.01.1993	22
	Աղաբեկյան Կիմ	բան. գիտ. թեկնածու, դոցենտ	23.12.1994	22
	Ափինյան Արգար	բան. գիտ. թեկնածու, դոցենտ	23.12.1994	21
	Աթաբեկյան Սերյոժա	բան. գիտ. թեկնածու, դոցենտ	01.05.1992	18
	Բակոբյան Լևոն	բան. գիտ. թեկնածու, դոցենտ	23.12.1994	13
8.	<b>Հայոց լեզվի</b>			
	Դավթյան Ֆելմիրա	ամբիոնի վարիչ	01.09.1993	8
9.	<b>Օտար և ռուսաց լեզվի</b>			
	Բանգյան Գոհար	ամբիոնի վարիչ	01.09.1992	9
10.	<b>Հասարակագիտության</b>			
	Կյուրեղյան Էդիկ	Փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ	10.07.1993	20
	Թումանյան Վարդան	ամբիոնի վարիչ, փիլիսոփ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	15.09.1993	42
	Մարտիրոսյան Ռուբիկ	ավագ դասախոս	01.09.1992	8
11.	<b>Պատմության</b>			
	Գեղամյան Գուրգեն	ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	01.09.1993	40
	Հայթյան Արամ	պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	23.03.1994	21
12.	<b>Իրավագիտության</b>			
	Ղարիբյան Համիկ	ամբիոնի վարիչ, իրավ. թեկնածու, դոցենտ	01.11.1993	18
	Համբարյան Վալերի	ավագ դասախոս	15.03.1993	2
	Բակոբյան Գառնիկ	ավագ դասախոս	14.10.1994	1

13.	<b>Ֆիզիկական կուլտուրայի</b>			
	Բեպինյան Հայկ	ամբիոնի վարիչ	01.01.1992	15
14.	<b>Հոգեբանության և մանկավարժության</b>			
	Մկրտումյան Մելս	ամբիոնի վարիչ, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.09.1998	11
	Աղուզումցյան Ռուբեն	հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.09.1992	21
15.	<b>Տնտեսագիտության տեսության և արտադր. ուժերի տեղաբաշխման</b>			
	Մանասյան Վոլոդյա	ամբիոնի վարիչ, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ	01.09.1992	22
	Մարգարյան Շավարշ	տնտ. դոկտոր, պրոֆեսոր	23.04.1994	39
	Մնանյան Լավրենտի	տնտ. դոկտոր, պրոֆեսոր	01.09.1993	28
	Մկրտչյան Մանուշ	տնտ. թեկնածու, դոցենտ	23.04.1994	34
16.	<b>Ֆինանսների և հաշվապահական հաշվառման</b>			
	Բաղանյան Լուկաշ	ամբիոնի վարիչ, տնտ. թեկնածու, դոցենտ	01.10.1993	28
	Թերլեմեզյան Գուրգեն	տնտ. թեկնածու, դոցենտ	01.02.1994	22
	Ալավերդյան Յուրա	տնտ. թեկնածու, դոցենտ	23.12.1994	23
	Սարգսյան Աիդա	տնտ. թեկնածու, դոցենտ	23.12.1994	33
17.	<b>Մակրոէկոնոմիկայի և միկրոէկոնոմիկայի</b>			
	Սուվարյան Յուրա	ամբիոնի վարիչ, տնտ. դոկտոր, պրոֆեսոր	23.12.1984	26
	Պետրոսյան Մարտիրոս	տնտ. դոկտոր, պրոֆեսոր	01.10.1993	17
	Զալանթարյան Պարույր	տնտ. թեկնածու, դոցենտ	23.12.1994	20

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ**

- 1. Տնտեսագիտության տեսության և ընդհանուր տնտեսագիտության ամբիոն  
Վարիչ՝ աշխարհագրական գիտութ. թեկնածու, դոցենտ  
*ՎՈՂՈՂՅԱ ՄԱՍՆԱՅԱՆ*
- 2. Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում և վիճակագրության ամբիոն  
Վարիչ՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
*ԱՒԴԱ ՍԱՐԴՈՒՅԱՆ*

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒՆԵՏ**

- 1. Բանասիրության և հայոց լեզվի ամբիոն  
Վարիչ՝ բանասիր. գիտութ. թեկնածու, դոցենտ  
*ՍԵՐԳԵՅ ԱԹԱՔԵԿՅԱՆ*
- 2. Պատմության և հասարակագիտության ամբիոն  
Վարիչ՝ պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
*ԳՈՒԳԵՆ ԳԵՂԱՄՅԱՆ*
- 3. Հոգեբանության և մանկավարժության ամբիոն  
Վարիչ՝ հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ  
*ՍԵՆԱ ՄԿՐՏՈՒՅԱՆ*
- 4. Օտար և ռուսաց լեզվի ամբիոն  
Վարիչ՝ ավագ դասախոս  
*ԳՈՂՏՐ ՀԱՍՉՅԱՆ*
- 5. Իրավագիտության ամբիոն  
Վարիչ՝ իրավագիտության թեկնածու, դոցենտ  
*ՀԱՄԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ*

**ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒՆԵՏ**

- 1. Դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոն.  
Վարիչ՝ ավագ դասախոս  
*ՊՈՂՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
- 2. Արվեստի պատմության և ազգագրության ամբիոն  
Վարիչ՝ ավագ դասախոս  
*ԱԼԻՆԱ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ*

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ**

- 1. Ֆիզիկական կուլտուրայի և քաղաքաշտպանության ամբիոն  
Վարիչ՝ ավագ դասախոս  
*ԼԱՐԻՍԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Հոկտեմբերի 10-ին մասնաճյուղի տնօրեն Շ. Մարգարյանը գրությամբ ԵՊՀ ղեկավար, ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյանին խնդրում է թույլ տալ «կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ» մասնագիտության ուսման տևողությունը չորս տարուց դարձնել հինգ տարի, որովհետև դրա անհրաժեշտությունն առաջացել էր բակալավրական կրթության ուսումնական պլաններին համապատասխան որակյալ կադրեր պատրաստելու առանձնահատկություններից: Միաժամանակ այդ ֆակուլտետի ղեկան Ս. Սարգսյանի առաջարկով Երևանից մասնաճյուղ դասախոսելու են գալիս մի խումբ անվանի արվեստագետներ, պրոֆեսորներ Հենրիկ Մամյանը, Լենմիր Բաղդասարյանը, Ստեփան Մուղնեցյանը, դոցենտ Կառլեն Ավետիսյանը, պետական մրցանակի դափնեկիր Իոսիֆ Բաբյանը, անվանի քանդակագործ Արարատ Հովսեփյանը, դասախոս Ռուբեն Մանուկյանը, Իջևանի մանկական գեղարվեստի դպրոցի տնօրեն Համլետ Մխիթարյանը: Նրանց շնորհիվ գեղարվեստական հյուսքի (տեքստիլ) բաժինների կողքին պատվավոր տեղ զբաղեցրին «մետաղի, քարի, փայտի մշակման, դիզայն» մասնագիտությունները: Իսկ այժմ աշխատանքներ են տարվում տեղական հումքի վրա բրուտագործության մասնագետներ պատրաստելու համար, որը նույնպես բնորոշ է Տավուշի մարզի ժողովրդական արհեստներին: Ամեն տարի ֆակուլտետի ուսանողներն իրենց աշխատանքներով մասնակցել են համալսարանական, մարզային և հանրապետական ցուցահանդեսների, արժանացել խրախուսանքի: Իսկ դասախոսների նոր գործերը ներկայացվել են Իջևանի «Վերնատուն» սրահում բացված ցուցահանդեսներում:

Ցանկացած կազմակերպություն ասպարեզ է գալիս իր առաքելությունը հռչակող փաստաթղթերով, որոնց մեջ կարևորը «նորեկի» կառուցվածքը և գործունեությունը որոշող կանոնների համակարգն է՝ կանոնադրությունը: Սա մանրամասնում է հաստատության գործունեության նպատակներն ու խնդիրները, դրանց իրականացման կարգը, կառույցի իրավական կարգավիճակը, ֆինանսավորման կարգը, ղեկավարումը, կոլեկտիվի անդամների իրավունքներն ու պարտականությունները: 1994 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության N 440 որոշումով Իջևանի տարածքային քոլեջի կարգավիճակի փոփոխությունից հետո այն դարձավ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ: 1997թ. հունիսի 2-ից

18.	<i>Մշակութաբանության և ազգագրության</i>			
	Մարզարյան Կարինե	ամբիոնի վարիչ		
Ամբիոնում էին աշխատում.				
	Սարո Սարուխանյանը			
	Բենրի Ջարգարյանը			
	Ալինա Ուլիխանյանը			
	Սաշա Յովսեփյանը			
	Շուշան Ռշտունին			
19.	<i>Դեկորատիվ կիրառական արվեստի</i>			
	Վարդանյան Գայանե	ամբիոնի վարիչ	01.01.1992	9
Ամբիոնում էին աշխատում.				
	Անահիտ Գամբարյանը			
	Պողոս Կարապետյանը			
	Գամլետ Մխիթարյանը			
	Ռաֆիկ Բուղդարյանը			
	Մխիթար Մխիթարյանը			
20.	<i>Կիրառական արվեստի Դիլիջանի բազային ամբիոն</i>			
	Ասատրյան Գամլետ	ամբիոնի վարիչ, նկարիչ	01.09.1992	23
21.	<i>Դիզայնի Երևանի բազային ամբիոն</i>			
	Նելիքյան Արսեն	ամբիոնի վարիչ, տեխն. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	10.09.1992	26

Հաստիքացուցակը նման մանրամասնությամբ բերվեց երկու նկատառումով. նախ՝ ովքեր են եղել գիտության այն երախտավորները, ովքեր նպաստել են Իջևանի տարածաշրջանային քուլտուրային կայացմանը, առաջին շրջանավարտներին կյանքի ուղեգիր տալուն:

Իջևանի քուլտուրայի գործունեության մեկնարկի կապակցությամբ ասվեց, որ մեծ էր ուսուցանվող մասնագիտությունների և ձևավորված խմբերի քանակը (17), որոնցում ուսումնագիտական աշխատանքների հաջող իրականացման նպատակով հետազայում ստեղծվեցին 21 ամբիոններ: ԵՊՀ մասնաճյուղ վերակազմավորվելուց հետո նպատակ դրվեց վերանայել ներդրված մասնագիտությունների քանակը: Ծառացած խնդիրները նոր էին, դրանց արծագանքելու պահանջը՝ հրատապ: Բանն այն է, որ բակավարիական կրթությամբ

համապատասխան կրթությամբ սկսեցին ներդրվել ուսումնական նոր պլաններ: Պատրաստվող կադրերի որակը բարձրացնելու, ինչպես նաև ֆակուլտետների ու ամբիոնների աշխատանքներն արդյունավետ դարձնելու նպատակով մասնաճյուղի գիտխորհրդի 18.05.1996թ. որոշմամբ, մասնաճյուղի տնօրենի 30.08.1996թ. N 73<sup>ա</sup> հրամանով լուծարվում են մանրատված 20 ամբիոնները՝ որոնց փոխարեն ստեղծվում են 13-ը, մի մասը՝ անվանափոխված: Կատարվում են ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների նոր նշանակումներ:

Սեպտեմբերի 20-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում մինչև մրցույթով ղեկանների ընտրության անցկացումը, 1996-1997թթ. ուստարում ժամանակավորապես ղեկանի պաշտոնակատար են նշանակվում. բնագիտական ֆակուլտետում՝ մասնաճյուղի ուսումնական հարցերով փոխտնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Օնիկ Սկրտչյանը, դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետում՝ ՀՀ նկարիչների միության անդամ, ավագ դասախոս Սպարտակ Սարգսյանը, տեղակալ՝ դասախոս Սաշա Յովսեփյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ պատմական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս Սամվել Առաքելյանը (ազատելով նրան տնտեսագիտության ֆակուլտետի ղեկանի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից), տնտեսագիտական ֆակուլտետում՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս Նելի Խուրազվերդյանը: Իսկ հաստատված ամբիոններն ունեին հետևյալ պատկերը.

#### ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

1. Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն.  
Վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր  
*ՖԵՐԴԻՆԱՆԴ ԳԱՄՊՐՅԱՆ*
2. Քիմիայի և կենսաբանության ամբիոն.  
Վարիչ՝ կենսաբանության դոկտոր, պրոֆեսոր  
*ՈՍՅԻԿ ԳՆՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

\*1996-ի մայիսին լուծարվել էր 21-րդ՝ Երևանի դիզայնի բազային ամբիոնը՝ իր գոյությունը չարդարացնելու պատճառաբանությամբ:

մինչև 2002թ. մասնաճյուղը նաև կոչվել է ԵՊՀ Իջևանի դուստր-ծեռնարկություն:

Գործող կարգին համապատասխան՝ այն պիտի ունենար իր կանոնադրությունը, որը ստեղծվեց 1995թ. առաջին կիսամյակում, հաստատվեց այդ տարվա հոկտեմբեր ամսին և գործեց մինչև 2001թ. ավարտը, երբ ՀՀ կառավարության որոշմամբ փոխվեց Երևանի պետական համալսարանի կարգավիճակը. այն սկսեց կոչվել «Երևանի պետական համալսարանի ոչ առևտրային կազմակերպություն»: Սա նշանակում է, որ հաստատությունը հնարավորություն էր ստացել ինքնուրույն տնօրինելու իր ամբողջ գույքը, լինել դրա սեփականատերը: ԵՊՀ նոր կանոնադրությամբ համալսարանի ղեկավարի պաշտոնը դարձել էր ընտրովի, որից հետո Իջևանի մասնաճյուղի կոլեկտիվի առաջադրմամբ 2002-ի մարտի 13-ին հաստատության ղեկավար ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, մասնաճյուղի կայացման և կայունացման երախտավոր Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:

Մայր համալսարանի կարգավիճակի փոփոխության հետ կարևոր փոփոխություններ տեղի ունեցան նաև նրա Իջևանի մասնաճյուղում: Իսկ դրանցից առաջնայինն էր ԵՊՀ գիտական խորհրդի 2002թ. մարտի 7-ի N1 որոշմամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաստատված կանոնադրությունը: Այս հիմնարար փաստաթղթով որպես հիմնական խնդիրներ սահմանված են.

ա/ ԵՊՀ ուսումնական ծրագրերով բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթությամբ մասնագետների վերապատրաստումը երկրորդ մասնագիտություն ձեռք բերելու միջոցով.

բ/ բնական և հումանիտար գիտությունների բնագավառում գիտական, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտությունների, ինչպես նաև կիրառական արվեստի բնագավառում նոր ստեղծագործությունների իրականացումը.

գ/ գիտական նշակումների տարածումն ու կուլտուր-լուսավորչական աշխատանքների իրականացումը:

Կանոնադրությամբ նաև հաստատվեց, որ մասնաճյուղում կիրառվելու է բարձրագույն կրթության ինչպես հնգամյա, այնպես էլ բակալավրի աստիճանին համապատասխանող ուսուցում, իսկ շրջանավարտներին կտրվի համապատասխան որակավորում և ա-

վարտական վկայական (դիպլոմ)՝ ԵՊՀ ղեկավարի ստորագրությամբ: Մասնաճյուղի ուսանողներն օգտվելու էին ԵՊՀ ուսանողների իրավունքներից (տղաները՝ նաև բանակ զորակոչվելու տարկետման իրավունքից) և կունենային նրանց պարտականությունները: Ժողովրդավարության պահանջներին համապատասխան՝ կանոնադրության մեջ հատուկ տեղ է հատկացված ուսանողության ինքնակառավարմանը և ընկերային շահերի պաշտպանությանը, որոնք պիտի ներկայացնեն ուսանողական խորհուրդը: Մասնաճյուղի կառավարման բարձրագույն մարմին է սահմանված գիտական խորհուրդը, որը կրթօջախի գործունեությունը նպատակամղում է գլխավոր խնդիրների կատարմանը: Գիտխորհրդի հին կազմը, որը գործում էր 2000թ. մայիսի 8-ից, փոխվեց 2003թ. հոկտեմբերի 1-ին և ունի ավելի ընդարձակ կազմ՝ 35 անդամ: Հետագայում մասնաճյուղի գիտխորհուրդը, որի նախագահն էր պաշտոնե հաստատության տնօրենն է, հաստատեց ֆակուլտետի, ամբիոնի խորհուրդների, քննությունների արդյունքների ամփոփման կանոնակարգերը, որոնցով ավելի նպատակամետ դարձան այդ կառույցների աշխատանքը և սովորողների ուսումնառության գործընթացը:

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

01.09.2004թ.

№	Ազգանուն, անուն,	պաշտոնը, գիտական աստիճանը
1.	Առաքելյան Սամվել	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն, խորհրդի նախագահ, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2.	Չուբարյան Էդվարդ	ԵՊՀ պրոռեկտոր, ՀՀ ԳԱ ակադեմիկոս
3.	Ղուլարյան Արմեն	Տավուշի մարզպետ
4.	Ներսիսյան Վարուժան	Իջևանի քաղաքապետ
5.	Անանյան Գարուշ	փոխտնօրեն
6.	Գրիգորյան Արշակ	գիտքարտուղար, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
7.	Մխիթարյան Մելանյա	գլխավոր հաշվապահ

8.	Ստեփանյան Նելլի	ուսումնական մասի վարիչ
9.	Դավթյան Արկադի	արհմիության նախագահ, տնօրենի օգնական
10.	Այվազյան Կամո	բնագիտ. ֆակ. դեկան, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ
11.	Խուրավերդյան Նելլի	տնտեսագիտ. ֆակ. դեկան, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ
12.	Սարգսյան Սպարտակ	կիրառական արվ. ֆակ. դեկան, ՀՀ նկարիչների միության անդամ
13.	Ալեքսանյան Վարդան	հումանիտար գիտ. ֆակ. դեկանի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
14.	Ղալումյան Աշոտ	բարձր. մաթ. և ինֆորմ. ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
15.	Քալանթարյան Վիտալի	ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
16.	Վարդանյան Խաչատուր	հայոց լեզվի և գրակ. ամբիոնի վարիչ, բանաս. գիտ. թեկնածու, դոցենտ
17.	Մկրտումյան Մելսիկ	մանկավ. և հոգեբան. ամբիոնի վարիչ, հոգեբ. դոկտոր
18.	Մկրյան Լևոն	օտար լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
19.	Հմայակյան Սիմոն	պատմ. և քաղաքագիտ. ամբ. վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
20.	Հովսեփյան Վոլոդյա	տես. տնտես. ամբ. վարիչի պաշտոնակատար, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
21.	Գալստյան Գագիկ	ֆինանսահաշվ. ամբ. վարիչի պաշտոնակատար, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ

22.	Մխիթարյան Համլետ	գծանկարի, գունանկարի և դիզայնի ամբ. վարիչի պաշտոնակատար
23.	Հարությունյան Լարիսա	ֆիզ. դաստիարակ. և քաղ. պաշտպ. ամբ. վարիչ
24.	Նահապետյան Ռաֆայել	ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահ, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
25.	Խաչատրյան Տաթևիկ	համակարգչային կենտրոնի վարիչ, դասախոս
26.	Առուստամյան Ալվինա	գրադարանի վարիչ
27.	Ջուրաբյան Մարատ	հում. գիտ. ֆակ. դեկանի տեղակալ, ասիստենտ
28.	Մամյան Հենրիկ	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակ. պրոֆեսոր, ճարտարապետ. դոկտոր
29.	Հարությունյան Ռաֆիկ	Անտառագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
30.	Աբրահամյան Հենրիկ	պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
31.	Նավոյան Վարազդատ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
32.	Փաշինյան Աշոտ	Տավուշի մարզպետար. կրթության վարչության պետ
33.	Կիսկինյան Ասպրամ	բնագիտ. ֆակ. «Անտառ. և անտառապ. տնտես.» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահ
34.	Սիմոնյան Մարգարետ	բնագիտ. ֆակ., 4-րդ կուրս, մասնաճյուղի ՈՒԽ-ի նախագահ
35.	Աղամյան Արսեն	հում. գիտ. ֆակ. «Պատմ.» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ

1994-1995թթ. ուսումնական տարվա մեկնարկին տեղի ունեցած վերակառուցումը, անշուշտ, բախտորոշ պիտի համարել նոր կրթօջախի ապագայի համար, որովհետև նա ստացավ բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ, մայր համալսարանի կազմում գիտակրթական նպատակամետ գործունեություն ծավալե-

լու, համալսարանական ուսումնառությամբ շրջանավարտներ պատրաստելու լավ հնարավորություն, որն արդեն համապատասխանում էր համալսարանական կրթության ներքին անհրաժեշտությամբ թելադրված զարգացմանը: Ուստի մասնաճյուղի կոլեկտիվն էլ արդեն մշտական հոգատար ուշադրության էր արժանանում ԵՊՀ գիտխորհրդի, ռեկտորատի, անձամբ ռեկտոր, ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյանի և պրոռեկտոր, ակադեմիկոս Էդվարդ Չուբարյանի կողմից: Է.Վ.Չուբարյանը, ի պաշտոնն լինելով ԵՊՀ-ի մասնաճյուղի պատասխանատուն, իր գիտելիքներով և մեծ կենսափորձով արդեն տասը տարի օգնում է հաստատության տնօրինությանը ծառայած խնդիրները լուծելիս, և ամենօրյա խորհրդատվությամբ նպաստում կոլեկտիվի աշխատանքի հաջողությանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ստեղծվեց ոչ դատարկ տեղում, այլ Իջևանի տարածաշրջանային քոլեջի հենքի վրա, ուր ի սկզբանե ուսումնառության ուղենիշ էին ԵՊՀ ուսումնական ծրագրերը: Կար նաև ձևավորված պրոֆեսորադասախոսական կազմ: Ուսումնագիտական գործընթացի կազմակերպման գլխավոր ստորաբաժանումների՝ ամբիոնների խորհուրդների, անցած տասը տարիներին կատարած աշխատանքին ծանոթանալիս նկատվում է, որ որպես մասնաճյուղ գործելու արդեն I տարում (1994-1995) զգալի գործ է կատարվել նախկին ուսումնական ծրագրերը լիովին ԵՊՀ-ի ծրագրերին համապատասխանեցնելու ուղղությամբ: Եվ դա կատարվել է այն հաշվով, որ ուսանողները լսարաններում կարողանան ստանալ ոչ միայն բավարար տեսական գիտելիքներ, այլ դրանք գործնականում կիրառելու հնարավորություններ: Նպատակը հնարավոր է դարձել մարզի և հանրապետության հիմնարկ-ձեռնարկություններում, դպրոցներում կազմակերպված արտադրական պրակտիկայի, նաև լաբորատորիաներում ու արվեստանոցներում իրականացված աշխատանքի շնորհիվ: Եվ դրա արդյունքը լավագույնս զգացվում է շրջանավարտների աշխատանքի անցնելուց հետո: Ամեն տարի ամբիոնների խորհուրդները, պահպանելով սահմանված ժամային նորմերը և հաշվի առնելով հանրակրթական, մասնագիտական և կամընտրական առարկայացանկը, մշակել, քննարկել և հաստատել են համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլանները և ներկայացրել ֆակուլտետների խորհրդին: Այսպես, 2002-2003 ուստարում 10 մասնագիտացման համար մշակվեցին 14 աշխատանքային պլաններ, որոնք հաստատվել էին համապատասխան ֆակուլտետների խոր-

հուրդների կողմից և հաստատվել ԵՊՀ գիտական խորհրդում: Միաժամանակ ամբիոնների նիստերում պարբերաբար քննարկվել են առարկայական ծրագրերի կատարման վիճակը, նրանց համապատասխանությունը ներկայացվող պահանջներին, ստուգվել և հաստատվել դասախոսների կողմից ներկայացված առարկայական ծրագրերը, ըստ սահմանված կարգի կազմակերպվել դասալսումներ և քննարկումներ: Պատշաճ ուշադրություն է դարձվել երիտասարդ կադրերի հետ տարվող աշխատանքին: Ամբիոնների և դեկանատների առաջարկով անցած տարիներին որոշ մասնագիտությունների ուսումնառությունն իրականացվել է հնգամյա ժամկետում: Սակայն ԵՊՀ գիտխորհուրդը և ռեկտորատը, ելնելով բարձրագույն կրթության համակարգի եռաստիճան (բակալավրիատ-մագիստրատուրա-ասպիրանտուրա) ձևից, 2004-2005 ուստարուց Իջևանի մասնաճյուղի համար սահմանել են լրիվ քառամյա (բակալավրիական) ուսուցումը և ուսումնական պլանների հետևյալ կառուցվածքը.

1. *Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթաբլոկ.*
2. *Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթաբլոկ.*
3. *Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկ.*
4. *Մասնագիտացման դասընթացների կրթաբլոկ (ընդհանուր լսարանային ժամերի մինչև 10 %-ը):*

Սահմանվել է նաև կիսամյակային շաբաթների թիվը և ուսանողների շաբաթական ծանրաբեռնվածությունը, ըստ որի՝ 1-7 կիսամյակների տևողությունը լինելու է 17, 8-րդ կիսամյակինը՝ 8 շաբաթ: Իսկ շաբաթական ծանրաբեռնվածությունը կլինի 1-4-րդ կիսամյակներում՝ 34 լսարանային ժամ (առանց ֆիզդաստիարակության դասընթացի ժամերի), 5-7 կիսամյակում՝ 30 և 8-րդ կիսամյակում՝ 20 ժամ: Ուսանողի ընդհանուր շաբաթական ծանրաբեռնվածությունը (ներառյալ ուսումնական պլանում ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամանակը) չպետք է գերազանցի 54 ժամը: Միաժամանակ հաստատվել է 2004-2005 ուսումնական տարվա բակալավրիատի ուսումնական պլաններում նախատեսվող ընդհանուր կրթական դասընթացների ցանկը, որով պիտի առաջնորդվեն ուսումնական պլաններ կազմող ամբիոնները:

1994-1995թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ինը մասնագիտությունների գծով մասնաճյուղը տվեց 180 շրջանավարտ (78-ը՝ քոլեջային, 82-ը՝ բակալավրիական կրթությամբ): Կրթօջախի տարեգրության մեջ առաջին անգամ նրանց տրվեց Երևանի պետական համալսարանի դիպլոմ: Նույն տարվա ամռանը տեղի ունեցած ընդունելության քննությունների արդյունքով մասնաճյուղի ուսանող (բակալավրիական կրթություն) են դառնում 164 դիմորդներ, որոնցից 101-ը՝ պետպատվերով, 63-ը՝ վճարովի: Գիտխորհուրդը և տնօրինությունը ճշգրտել էին մասնագիտությունների ցանկը, մի քանիսը դուրս էին մղվել պահանջարկի բացակայության պատճառով: Ընդունելությունը կատարվել էր «Ֆիզիկա», «կիրառական մաթեմատիկա», «ընդհանուր տնտեսագիտություն», «հայոց լեզու և գրականություն», «պատմություն», «նախադպրոցական մանկավարժություն և հոգեբանություն», «ղեկորատիվ կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ» մասնագիտություններով, որոնք նույնությամբ պահպանվեցին հաջորդ հինգ տարիներին: Միայն 2001թ. այդ ցանկն ընդարձակվեց տնտեսագիտական ֆակուլտետի կազմում ներդրված «Մշակութաբանություն և տուրիզմ» մասնագիտությամբ, որի կարիքը հանրապետությունում զգացվում է: Իսկ 2002-ին բնագիտական ֆակուլտետում գիտխորհրդի առաջարկով արմատավորվեց «անտառային և անտառապուրակային տնտեսություն» մասնագիտությունը: Սակայն ելնելով Հայաստանի բնության առկա վիճակի հրատապ պահանջներից՝ որոշվեց մասնագետներ պատրաստել բնապահպանության գծով: Բնագիտական, տնտեսագիտական, կիրառական արվեստի ֆակուլտետների ղեկավաները 2000 թվականից մնացին անփոփոխ, իսկ 2000-2003թթ. հունանիտար գիտությունների ֆակուլտետը ղեկավարեց պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռաֆիկ Նահապետյանը:

1995թ. հոկտեմբերին, նախկին քոլեջի ընդունելության պայմաններին համապատասխան, հանձնաժողովը կատարում է սովորողների ընտրություն: Լավագույն 84 ուսանողներին թույլատրվում է ուսումը շարունակել համապատասխան ֆակուլտետների համապատասխան մասնագիտությունների գծով բարձրագույն ուսումնառության բաժնում (բակալավրիատ), իսկ 73-ը տեղափոխվում են քոլեջային ուսումնառության հաջորդ կուրսեր և մասնաճյուղն ավարտում 1996թ. հուլիսին: Դրանով էլ դադարեցվում է քոլեջային ուսուցումը, որովհետև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար, նրա Կանոնադրությամբ, սահմանված էր բարձրագույն կրթության ինչպես հնգամյա,

այնպես էլ բակալավրի աստիճանին համապատասխանող ուսուցում: 1997թ. սեպտեմբերի 2-ին մասնաճյուղում իրականացվում են կառուցվածքային նոր փոփոխություններ: Գիտխորհրդի որոշմամբ կիրառական արվեստի ֆակուլտետում լուծարվում է «արվեստի պատմություն և ազգագրություն» ամբիոնը, ապա անվանի նկարիչ Սպարտակ Սարգսյանի ղեկավարությամբ հիմնվում է «գծանկար-գունանկար» ամբիոնը, որովհետև գծանկարը կերպարվեստի բոլոր տեսակների հիմքն է, ուստի կարևոր է ապագա մասնագետների ուսուցման գործում: Համապատասխան մասնագիտություններով կադրերի պատրաստումը դադարեցնելու կապակցությամբ լուծարվում են պատմության և ազգագրության, կենսաքիմիայի և իրավագիտության ամբիոնները: 1996թ. ապրիլի 16-ին ԵՊՀ ռեկտորի հրամանով Իջևանի մասնաճյուղի տնօրեն է նշանակվում տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Շավարշ Մարգարյանը, որը մայր համալսարանում համատեղության կարգով շարունակեց վարել տնտեսագիտության ամբիոնը: Նույն օրը զբաղեցրած պաշտոնից ազատվում է կրթօջախի ստեղծող և կայացման անխոց նվիրյալ Համլետ Սուրենի Կարայանը: Նա թողնում է մասնաճյուղի ֆիզիկական էլեկտրոնիկայի և էլեկտրոնային ֆիզիկայի ամբիոնի վարիչի պաշտոնը, ապա, տեղափոխվելով Երևան, պրոֆեսորի պաշտոնով աշխատանքի անցնում ԵՊՀ օպտիկայի ամբիոնում:

Պրոֆեսոր Շ. Ս. Մարգարյանը կրթօջախը ղեկավարեց չորսուկես տարի: 2000թ. հոկտեմբերի 17-ին մարզպետարանի նիստերի դահլիճում հանդիսավորությամբ նշվում էր անվանի տնտեսագետի ծննդյան 70-ամյակը: Ներկաները բարձր են գնահատում նրա վաստակը Հայաստանի տնտեսագիտական մտքի զարգացման, կրթական համակարգում ունեցած ավանդի, նոր կադրերի, հատկապես երիտասարդ գիտնականների պատրաստման գործում: Ընթերցվում են բազմաթիվ ուղերձներ: Հանդիսության ավարտին բեմահարթակի խոսափողին է մոտենում հորեյարը և... մահացու կաթվածով տապալվում հատակին... ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար է նշանակվում փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Սամվել Առաքելյանը, իսկ մեկ տարի անց (25.10.2001թ.) ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ.Մ.Մարտիրոսյանի հրամանով հաստատվում տնօրեն և այդ պաշտոնում աշխատում է ցայսօր: Մասնաճյուղի տնօրենի տնտեսական աշխատանքների գծով տեղակալն է Գարուշ Անանյանը: Իսկ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը՝ մինչև 1996թ. հուլիս ամիսը եղել է ֆիզմաթ գիտությունների

թեկնածու Անուշավան Մակարյանը, 1996-1999 թվականներին՝ տեխնիկական գիտությունների թեկնածու Օնիկ Մկրտչյանը: Մեկուկես տարի կասեցվում է փոխտնօրենի պաշտոնը, ապա վերականգնվում 2000թ. սեպտեմբերի 30-ին, երբ նոր փոխտնօրեն է նշանակվում Սամվել Առաքելյանը, որը շատ շուտով որպես պաշտոնակատար փոխարինում է մահացած տնօրենին: Այժմ մասնաճյուղի ղեկավար կազմի հաստիքացուցակով տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի պաշտոն չի նախատեսվում:

Իր տեղում ասվեց, որ Իջևանի տարածաշրջանային քոլեջի գործունեությունը հնարավոր դարձավ ծավալել Երևանից հրավիրված անվանի գիտնականների ու փորձառու դասախոսների ջանքերի շնորհիվ: Իսկ տեղացի դասախոսները հիմնականում Իջևանի դպրոցների ուսուցիչներ էին, որոնցից միայն երկուսը՝ Նելլի Խուդավերդյանը և Սերյոժա Օհանյանն էին գիտությունների թեկնածուներ: Ահա ուսումնական գործընթացի մեջ ընդգրկված այս հմուտ ուսուցիչներն էլ դարձան Իջևանի քոլեջի և ապա՝ ԵՊՀ Իջևանի մշտական աշխատողներ, որոնց ավանդը մեծ է կրթօջախի 10-ամյա գործունեության կայացման մեջ:

Իսկ տեղացի դասախոսներով գիտությունների թեկնածուների ցուցակը ընդլայնելը ոչ միայն ցանկալի, այլև պարտադիր էին համարում ինչպես քոլեջի, այնպես էլ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհուրդն ու տնօրինությունը: Ուստի ուսումնառության և ամբիոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների ընթացքում կատարվում էր ապագա հայցորդների և ասպիրանտների ընտրություն: Ուսումը շարունակելու, թեկնածուական թեզ պաշտպանելու երաշխավորագրեր էին տալիս գիտահետազոտական և մանկավարժական աշխատանքի հակումներ դրսևորող դասախոսներին և ավարտական կուրսերի բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողներին: Իրականացված նպատակամետ աշխատանքի շնորհիվ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մեկնարկից հետո թեկնածուական թեզ են պաշտպանել պատմաբան Սամվել Առաքելյանը (1995թ.), ֆիզիկոս Կամո Այվազյանը (1996թ.), բանասեր Ֆելմիրա Դավթյանը (1997թ.), մաթեմատիկոսներ Մանվել Զաքարյանը, Արտակ Ցուցուլյանը (2002թ.), հոգեբան Անահիտ Սահակյանը (2003թ.), բանասեր Աիդա Սարիատյանը (2004թ.), տնտեսագետ Էրիկ Օրդինյանը (2004թ.) և կենսաբան Արթուր Ալավերդյանը

(2004թ.): Կրթօջախում աշխատող գիտությունների մի խումբ թեկնածուներ պատրաստ են պաշտպանության ներկայացնելու իրենց դոկտորական թեզերը: Գիտությունների թեկնածուներով մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի շարքերի համալրում է սպասվում մոտակա տարիներին, և դա լավ երևում է հայցորդների, ասպիրանտների 2004թ. օգոստոսի 1-ին կազմած ցուցակից.

#### Բնագիտական ֆակուլտետ

Մարգարյան Ալեքսան	- հայցորդ
Օսիպովա Էլմիրա	- ասպիրանտ (ավարտած)
Յովսեփյան Միեր	- ասպիրանտ (ավարտած)
Ափինյան Արտակ	- ասպիրանտ
Ճաղարյան Մարիետա	- հայցորդ

#### Տնտեսագիտական ֆակուլտետ

Ճաղարյան Արտակ	- հայցորդ
Սարիբեկյան Անուշ	- հայցորդ
Էդիյան Նաիրա	- հայցորդ
Ավետիսյան Գայանե	- հայցորդ

#### Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

Հովհաննիսյան Հրաչ	- ասպիրանտ
Ավետյան Սարգիս	- ասպիրանտ
Արամյան Լիլիթ	- ասպիրանտ
Զուրաբյան Մարատ	- հայցորդ
Հասանյան Ալիսա	- հայցորդ
Թումանյան Լուսինե	- հայցորդ
Սարուխանյան Սուշեղ	- հայցորդ
Քամալյան Աննա	- հայցորդ
Դավթյան Նունե	- ասպիրանտ

Ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության արդյունավետ աշխատանքն անհնար է պատկերացնել առանց գրադարանի, որը նպաստում է ուսումնագիտական գործընթացի կազմա-

կերպմանը: Իջևանի քոլեջի գրադարանը ստեղծվել է նրա առաջին քայլերի հետ: 33 ԲԿԳ պետական կոմիտեի 1991թ. հոկտեմբերի 10-ի որոշումից հետո Իջևանի շրջխորհրդի գործկոմի տնօրինությամբ նորահաստատ կրթօջախին անցան ոչ միայն Իջևանի նախկին շրջկոմին պատկանած եռահարկ մասնաշենքն ու գույքը, այլև շրջկոմի քաղլուսկաբիմետի գրադարանը, որն այդ պահին ուներ շուրջ 11 հազար կտոր գիրք: Դրանցից 6300-ը փոխանցվեց քոլեջին, իսկ քաղաքական գրականությունը ժամանակի ոգով անփութորեն չգրանցվեց և ոչնչացավ: Եղած հարստության պահպանման, հետագա համալրման ուղղությամբ արժանի ավանդ ներդրեց գրադարանային գործի հմուտ մասնագետ Գրետա Մարությանը: Իջևանի գրադարանների կենտրոնացված համակարգի N1 և 2 գրադարանները կրթօջախին նվիրեցին 245, քաղաքային գրադարանը՝ 440 կտոր գիրք: Գրադարանի վարիչը, Երևանի գրքի կոլեկտորից ձեռք բերեց 1165 միավոր մասնագիտական գրականություն: Հետագայում Իջևանի քոլեջը ԵՊՀ ԻՄ վերակազմավորվելուց հետո մասնագիտական գրքերի մեծ խմբաքանակ նվիրեցին Բյուրականի աստղադիտարանը, Երևանի պետական համալսարանը, անհատապես՝ Համլետ Կարայանը, Սիմոն Հմայակյանը, Ռաֆիկ Հարությունյանը, Ստեփան Եսայանը, Լավրենտի Միրզոյանը, Սամվել Բեգլարյանը, Աշոտ Ղալումյանը, Մելսիկ Մկրտումյանը և ուրիշներ: Գրականության ձեռքբերման շնորհակալ աշխատանքը շարունակվեց մասնաճյուղի գործունեության անցած տասը տարիների ընթացքում և դրա շնորհիվ 2004թ. սեպտեմբերին հաստատության գրադարանում հաշվվում էր շուրջ 12.6 հազար կտոր գիրք և տպագիր գրականություն:

Ժամանակակից կյանքն անհնար է պատկերացնել առանց համակարգիչների և ինտերնետային կապի, որոնցով աշխատելու ունակությունը խթանում է և արագացնում այդ գործընթացը, գիտելիքների ու տեղեկատվության փոխանակումը, խնայում միջոցներ և ժամանակ: Ուստի և համակարգիչների դերն անգնահատելի է սովորողների ուսումնառության, գիտական ուսումնասիրությունների ոլորտում: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կազմավորման սկզբից ուներ համակարգիչներ, սակայն առկա քանակը հնարավորություն չէր տալիս դրանցով աշխատել սովորեցնել բոլոր ուսանողներին և դասախոսների: 1995 թվականից համակարգչով աշխատել էին ուսուցանում բնագիտական ֆակուլտետի «ԷՀՄ և ծրագրավորում», հետագայում «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» վերանվանված լա-

բորատորիայում, որի վարիչն էր Մարիետա ճաղարյանը: 2000թ. ավարտին մասնաճյուղի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարապետ Թրունու ներկայացրած ծրագրով մասնաճյուղն արժանացավ «Եվրասիա» հիմնադրամի «Ինտերնետի ազատ մուտք» դրամաշնորհին, որով գնվեցին չորս նորագույն համակարգիչներ: Շուրջ երկու տասնյակ համակարգիչներ ձեռք են բերվում մասնաճյուղի միջոցներով: Ունենալով տեխնիկայի բավարար քանակություն՝ հաստատության տնօրենի պաշտոնակատար Ս. Առաքելյանը նպատակահարմար է գտնում իրականացնել կառուցվածքային փոփոխություն: 2001թ. ապրիլի 4-ին նրա հրամանով լուծարվում է «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» լաբորատորիան և դրա հիմքի վրա ստեղծվում համամասնաճյուղային համակարգչային կենտրոն, որը կոչված էր նպաստելու մասնաճյուղում ինչպես համակարգչային տեխնոլոգիաների հետ կապված ուսումնական գործընթացի, այնպես էլ համակարգչային տեխնիկայի սպասարկման և շահագործման արդյունավետ կազմակերպմանը: Կենտրոնի ղեկավարի պարտականությունը հասարակական կարգով դրվում է մասնաճյուղի գիտքարտուղար, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ Արշակ Գրիգորյանի վրա: Նրա ջանքերով կահավորվում և գործունեություն է ծավալում կրթօջախի կառուցվածքային այս նոր կարևոր միավորը: Իսկ նույն տարվա սեպտեմբերից կենտրոնն արդյունավետորեն ղեկավարում է Տաթևիկ Խաչատրյանը, որի գլխավորությամբ համակարգիչներով աշխատելու հմտություններ են ձեռք բերում բոլոր ուսանողները: 2004թ. օգոստոսի 1-ին կենտրոնն զբաղեցնում էր երկու սրահ (N 1 և 2) և ուներ 24 համակարգիչ, որոնցից օգտվում են նաև կրթօջախի աշխատակիցները:

Կրթօջախի կանոնադրությամբ սահմանված է, որ պետպատվերով մասնաճյուղ ընդունվածները ստանում են կրթաթոշակ, որից զրկվելու պատճառ կարող է դառնալ վատ առաջադիմությունը: Իսկ ուսումնառության որակի բարձրացումը եղել է գիտխորհրդի և տնօրինության մտահոգության առարկան, ուստի տարբեր ձևերով խրախուսվել են «լավ» և «գերազանց» գնահատականներով սովորողները: Մասնաճյուղի 1996-2000թթ. տնօրեն Շ.Ս. Մարգարյանի մահից հետո, նրա հիշատակը հավերժացնելու համար, 2000-ի դեկտեմբերին ստեղծվում է նրա անվան տնտեսագիտության կաբինետ-լսարան և սահմանվում «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակ՝ ութ հազար դրամ գումարով: Սակայն շուտով զգացվում է, որ դա անբա-

վարար է բոլոր ֆակուլտետների լավագույն ուսանողներին խրախուսելու համար: Ուսումնասիրելով ֆակուլտետներից ստացված առաջարկները՝ գիտխորհուրդը և տնօրինությունը որոշում են անվանական կրթաթոշակներ (դրամական) սահմանել բոլոր մասնագիտություններով գերազանց առաջադիմությամբ սովորողների համար, և գործող «Շավարշ Մարգարյան» կրթաթոշակը հետագայում շնորհել «Տեսական տնտեսագիտություն» մասնագիտության լավագույն ուսանողին: Սահմանվում են ևս հինգ անվանական կրթաթոշակներ՝ «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ»-ը՝ կրթօջախի, «Անանիա Շիրակացի»-ն՝ «կիրառական մաթեմատիկա» մասնագիտության, «Գրիգոր Նարեկացի»-ն՝ «հայոց լեզու և գրականություն» մասնագիտության, «Դավիթ Անհաղթ»-ը՝ «մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության, «Մինաս Ավետիսյան»-ը՝ «դիզայն» մասնագիտության գերազանց առաջադիմությամբ սովորող ուսանողների համար: Այս գործընթացին 1998 թվականից իր ավանդն է բերում Իջևանի քաղաքապետարանը, որը ամենամյա դրամական մրցանակներ է շնորհում մասնաճյուղի հինգ լավագույն ուսանողների:

Հայտնի է, որ ի սկզբանե մասնաճյուղում կիրառվել են ուսումնառության պետական պատվերի և վճարովի համակարգերը: Ըստ այդմ, կրթօջախի բյուջեն էլ ձևավորվել է պետական հատկացումներից, ուսանողների վարձավճարներից, և դրանց աճին զուգընթաց աճել են աշխատողների վարձատրության ու ուսանողների թոշակի չափերը, որոնք լավ արտահայտված են մասնաճյուղի բյուջեի, աշխատավարձի և թոշակի՝ ստորև բերվող վերջին յոթ տարիների արդյունքում.

Ֆինանսական տարի	բյուջեով հատկացված գումար	ո Ր Ի Գ	
		աշխատավարձ	թոշակ
1998	30818,0	11200,0	14864,0
1999	36846,0	12926,0	18382,0
2000	41965,0	16187,0	19680,0
2001	45000,0	15360,0	19500,0
2002	52921,0	16900,0	21500,0
2003	48888,0	18501,0	22500,0
2004	52000,0	25041,0	21100,0

Թվերը խոսում են այն մասին, որ 1998 թվականի համեմատ մասնաճյուղի բյուջեն ավելացել է 21 միլիոն 182 հազար դրամով կամ 68 տոկոսով: Միաժամանակ ավելացել են աշխատավարձերի և կրթաթո-

շակների չափերը: Հարկ է նշել, որ տնօրինությունը նաև միջոցներ է գտել ուսումնական նոր տարածքների ձեռքբերման, հիմնանորոգման ու կահավորման համար:

Մասնաճյուղում գիտահետազոտական աշխատանքները նաև հետագայում ընթացել են տարբեր հարցերի ուսումնասիրման ուղղությամբ, և դրանց հեղինակները գիտական նստաշրջաններում, մասնագիտական մամուլում հանդես են եկել զեկուցումներով, հոդվածներով: Վերջին տարիներին նշանակալի են եղել ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Յուրա Բաբայանի ղեկավարությամբ ուսումնասիրվող «Հակաուռուցքային դեղամիջոցներ-ԴՆԹ փոխազդեցությունների մոլեկուլային մեխանիզմների պարզաբանումը» և մանկավարժության ու հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր Մելսիկ Մկրտումյանի ղեկավարությամբ ուսումնասիրվող «Հայաստանի սահմանամերձ շրջանների ազգաբնակչության ետվնասվածքային հոգեվիճակի վերականգնման գործընթացի առանձնահատկությունները» թեմաները: Կատարված ծավալուն աշխատանքի արդյունքը ներկայացվել է զեկուցումների և հոդվածների տեսքով: Որպես գիտահետազոտական աշխատանքների արդյունք՝ լույս են տեսել մենագրություններ: Դրանցից են դասախոսներ Նուրնե Դավթյանի «Պարույր Սևակի գրականագիտական հայացքները» և Ռուբեն Սիմոնյանի «Տավուշի մարզ» աշխատությունները:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տասնամյա տարեգրության կարևոր էջերից է «Իջևանի ուսանող» թերթի տպագրության կազմակերպումը, որի անդրանիկ համարը լույս տեսավ 2001թ. մայիսին: Նրա ծնունդը խանդավառությամբ դիմավորեցին ուսանողները, իսկ ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը, պրոռեկտոր Է. Չուբարյանը, Տավուշի մարզպետ Ա. Ղուլարյանը, մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Ս. Առաքելյանը և լրագրողների մարզային կազմակերպության ներկայացուցիչ Ռ. Օհանյանն ուղերձներով շնորհավորեցին այդ իրադարձությունը: Թերթը, որի խմբագիրն է Զավեն Ալավերդյանը, իր առաքելության նպատակն է դարձրել մասնաճյուղի ուսանողության կրթական, դաստիարակչական, մշակութային հարցերի լուսաբանումը: Թերթը անդրադարձներ է կատարում Տավուշի մարզի և հանրապետության սոցիալ-տնտեսական ու մշակութային կարևորագույն նորույթները լուսաբանելուն: «Իջևանի ուսանող»-ը կարճ ժամանակում դարձել է մասնաճյուղի ստեղծագործողների բարեկամը. արդեն լույս են տեսել շուրջ հիսուն հեղինակների գրական ստեղծագործությունները:



հուրդը (հիմնադիր նախագահ՝ Դավիթ Շահնազարյան): Իրենց առաջադրած ներկայացուցիչների միջոցով մասնաճյուղի ֆակուլտետների ՈւԽ-ները մասնակցում են մասնաճյուղի, ֆակուլտետների և ամբիոնների կառավարմանը՝ ուսանողներին առնչվող հարցերի առաջադրման միջոցով: Ուսումնագիտական, կրթական, մշակութային, ազատ ժամանցի միջոցառումները մեծ տեղ են զբաղեցնում մասնաճյուղի ՈւԽ-ի գործունեության մեջ: Հիշարժան է 1999-ի ավարտին ԵՊՀ 80-ամյակին նվիրված գիտաժողովը, որի միջոցառումները տեղի ունեցան բոլոր ֆակուլտետներում: Մասնաճյուղի բազմաթիվ ուսանողներ մասնակցել են ֆակուլտետային, համամասնաճյուղային, ԵՊՀ-ի և հանրապետական ինտելեկտուալ խաղերին, համահայկական երիտասարդական «Բազե» կազմակերպության ճամբարումներին՝ համակողմանիորեն ներկայացնելով Տավուշի մարզը: Ֆակուլտետների ՈւԽ-երը բազմազան միջոցառումներ են նվիրել Ամանորին, Մայրության և գեղեցկության տոներին, Սուրբ Ջատկին, էքսկուրսիաներ կազմակերպել դեպի Հայաստանի և Տավուշի մարզի տեսարժան վայրերը:

2002 թվականից գործունեություն է սկսել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ), որն ուսումնական ոլորտներում սատարել է ուսանողության նախաձեռնությունների իրականացմանը, կազմակերպել գիտահանրամատչելի դասախոսություններ և գիտակրթական այլ միջոցառումներ, որոնց հաջող իրականացմանը խորհրդատվությամբ և բանիմաց գիտնականների մասնակցությամբ նպաստել է հաստատության գիտական խորհուրդը: 2002թ. փետրվարին ընկերության նախաձեռնությամբ ուսանողությունը գիտաժողով է նվիրել ազգային հերոս Անդրանիկի (Անդրանիկ Օզանյան) կյանքին և ազգանվեր գործունեությանը: Համամասնաճյուղային շարադրությունների մրցույթ է անցկացվել «Ես սիրում եմ» թեմայով: 2003-ի դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած գիտաժողովը նվիրվել է հրատապ խնդիրներից մեկին՝ ՁԻԱՀ-ին: 2004-ի ապրիլի 24-ին հրավիրված ուսանողական գիտաժողովում կարդացված զեկուցումները տարբեր տեսանկյուններից անդրադարձել են Հայոց Մեծ եղեռնի պատմությանը: Գիտական ընկերությունը կազմակերպել է բանավեճ «Հայ կնոջ կերպարը» թեմայով սեմինար-զեկուցումների շարք՝ նվիրված Վերածննդի մեծ գործիչներին: Տեղի են ունեցել գրողներ Ջավեն Պետրոսյանի և Սամվել Բեգլարյանի նոր գրքերի քննարկումները, իսկ 2003-ի վերջից սկսվել է մաս-

նաճյուղի ուսանողների գիտական և գրական ստեղծագործությունների հավաքագրումը՝ մասնաճյուղի ուսանողական գիտական անդրանիկ ժողովածուում տպագրելու համար: ՈՒԳԸ-ն հիմնադրման շրջանից ղեկավարել է Էդիտա Սիմոնյանը, իսկ այժմ նրա նախագահն է Ասպրամ Կիսկինյանը: Կազմակերպության առաջիկա ծրագրերում նախատեսված են ուսանողական գիտական նստաշրջաններ, օլիմպիադաներ, սեմինարներ և տարբեր միջոցառումներ՝ ուսանողական խորհրդի մասնակցությամբ, որի նպատակն է նպաստել ուսանողների խոր ու համակողմանի գիտելիքների ձեռքբերմանը, գիտական և ստեղծագործական մտքի խթանմանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տասնամյա գործունեությունն այս գրքույկով ներկայացվում է որպես զալիք մեծ տարեգրության մեկնակետ, որի արդյունքը արդեն իսկ բեղուն է ու լուսավոր: Հաստատությունը 1994-2004 թվականների ընթացքում տվել է 1553 շրջանավարտներ, որոնք հաջողությամբ աշխատում են արտադրության տարբեր բնագավառներում, իրավապահ մարմիններում, պետական կառույցներում, դպրոցներում, միջազգային կազմակերպություններում:

**ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԳՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ**  
(01.10.2004թ.)

Տնօրեն՝ *ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՍՎԵԼ ԱՐՇԱԿԻՐԻ*, պատմ. գիտ.  
թեկնածու, դոց

Տնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն՝  
*ԱՍՆՅԱՆ ԳԱՐՈՒՇ ԳՈՒՐԳԵՆԻ*

Գիտական խորհրդի քարտուղար՝ *ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ ԶԻ*  
ֆիզմաթ. գիտ.թեկնածու, դր

Տնօրենի օգնական՝ *ՂԱՎԹՅԱՆ ԱՐԿԱՐԻ ՅՈԼԱԿԻ*

**1. Ընդհանուր ծառայողական բաժիններ**

1. Ուսումնական մաս  
Վարիչ՝ *Ստեփանյան Նելլի*
2. Կադրերի և հատուկ բաժին  
Վարիչ՝ *Արազյան Նարինե*
3. Հաշվապահություն  
Գլխավոր հաշվապահ՝ *Մխիթարյան Սելանյա*
4. Գրադարան  
Վարիչ՝ *Առուստամյան Ալվինա*
5. Արխիվ  
Վարիչ՝ *Մարության Գրետա*
6. Քաղաքաշտպանության շտաբ  
Պետ՝ *Քամայան Ռոբերտ*
7. Տնտեսական մաս  
Վարիչ՝ *Պետրոսյան Էդիկ*

Մասնաճյուղում գործող ֆակուլտետների թիվը՝ 4

**ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Դեկան՝ *ԱՅՎԱԶՅԱՆ ԿԱՍՈՒ ԲԵՆԻԿԻ*, տեխն. գիտ.  
թեկնածու, դոցենտ

**Ֆակուլտետի մասնագիտությունները**

<b>ՇիՖր</b>	<b>Մասնագիտություններ</b>
0103	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա
2604	Անտառաշին և անտառապուրակաշին
տնտեսություն	
0101, 0301, 0104	Մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա

Շրջանավարտների թիվը՝ 268\*

Կրթական աստիճան, մասնագիտություն	Ուսանողների թիվը՝ 265									
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս		V կուրս	
	ա/ա	վճ	ա/ա	վճ	ա/ա	վճ	ա/ա	վճ	ա/ա	վճ
Բակալավրիատ										
մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա	21	18	20	15						
մաթեմատիկա, ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	13	6	13	5
Ֆիզիկա, ինֆորմատիկա	-	-	-	-	19	14	8	11	7	7
Անտառաշին և անտառապուրակաշին	5	15	6	15	4	13	5	14	6	5
